



«ԿԱԶԱ» ՇՎԵՑՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1997-2017

www.kasa.am

«ԿԱԶԱ»
ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1997-2017

www.kasa.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախագահի խոսքը	6
Տնօրենի ուղերձը	7

1. Ընդհանուր տեղեկություններ

Պատմական ակնարկ	10
Մոտեցումներ	11
Կառուցվածք և գործունեություն	12

2. Գործունեության ոլորտներ

Գործունեության քարտեզ	16
Մարդասիրություն	19
Շինարարություն	25
Կրթություն	31
Գյուղատնտեսություն	43
Չքոսաշրջություն	47

3. Ֆինանսներ

Ֆինանսական տվյալներ	51
Նվիրատուներ և գործընկերներ	54

4. Նկարներ՝ կարևոր պահերից	59
----------------------------	----



ՆԱԽԱԳԱՅԻ ԽՈՍԲԸ

Ծնվելով 1997թ. Հայաստան այցելած շվեյցարական երգչախմբի՝ երկրի հանդեպ ծագած սիրո ու հետաքրքրության արդյունքում՝ «ԿԱԶԱ»-ն Շվեյցարիայում գործում է որպես միություն, իսկ Հայաստանում՝ որպես հիմնադրամ: Սույն հաշվետվությունը նշանավորումն է 20 տարվա բեղուն գործակցության այն հայուհիների և հայերի կողքին, որոնք վճռել են անցնել ի գործ՝ կերտելու համար իրենց հանրապետությունը՝ ի հեճուկս ճանապարհին հանդիպող բոլոր խոչընդոտների:

Մենք բացահայտել ենք գործունյա մի ժողովուրդ, որի կենսունակ ուժերը մարտահրավեր են նետում հնացող ճառերին: Ժողովուրդ, որին ոգի են տալիս նախաձեռնող և ստեղծագործ երիտասարդները: Հպարտ իրենց սեփական արժեքներով՝ նրանք միաժամանակ բաց են միջմշակութային առողջ երկխոսության համար՝ առանց գայթակղվելու տնտեսական համաշխարհայնացման պատրանքներով, և որոնում են մի երրորդ՝ հումանիստական ուղի անհատապաշտության և համայնապաշտության միջև՝ համակցելու համար անձնական աճն ու ուրիշի հանդեպ հարգանքը՝ ընդհանուրի բարօրության մշտական մտահոգությամբ տոգորված:

Ուրախ ենք նպաստել զարգացնելու եռանդուն Հայաստան, որը խիզախորեն ներդնում է բոլոր ջանքերը՝ իր տեղը զբաղեցնելու համար ժողովրդավարական ազգերի ընտանիքում, և շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր աջակցում են այս իմաստալից ծրագրի իրագործմանը Շվեյցարիայում, Եվրոպայում և Հայաստանում:

«ԿԱԶԱ»-ի նախագահ և հիմնադիր անդամ Մոնիկ Բոնդուֆի-Մասրաֆ



ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

2017 թվականը խորհրդանշական տարի էր «ԿԱԶԱ»-ի համար. նշեցինք մեր գործունեության 20-րդ տարեդարձը: Այս հաշվետվությամբ փորձել ենք ամփոփել հիմնադրամի անցած ճանապարհն այդ երկու տասնամյակների ընթացքում: Թվերից և փաստերից առավել ցանկացել ենք շեշտը դնել շահառուների հետ մեր աշխատելաճճի, մոտեցումների և մեթոդների վրա, որոնք չենք դադարում մշակել և կատարելագործել՝ լավագույնս արձագանքելու համար նրանց փոփոխվող կարիքներին ու մեր գործունեության ոլորտներում ի հայտ եկող նոր մարտահրավերներին:

Ես իմ թիմի անունից շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն անհատներին և կառույցներին, որոնց հետ բախտ ենք ունեցել համագործակցելու՝ Հայաստանի կայուն զարգացմանն ուղղված կարևոր նախաձեռնությունների իրականացման շրջանակներում, ինչպես նաև մեր ծրագրերի բոլոր շահառուներին. նրանց հետ ինքներս շատ ենք աճել և նրանց օրինակներով՝ ոգեշնչվել: Մեր շահառուների հետ փոխադարձ անկեղծությամբ և հարգանքով լի մշտական շփումների, փոխանակումների շնորհիվ է, որ մեզ հաջողվել է գործի դնել իմաստալից և տեղին ծրագրեր:

Շնորհակալություն եմ հայտնում նաև «ԿԱԶԱ»-ի ամբողջ «համայնքին»՝ ինչպես Շվեյցարիայում և Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում. նրա կազմում գործում են անձինք, որոնց միավորում է առավել համերաշխ, արդար և ծաղկուն աշխարհի տեսլականը, և որոնք դրան հասնելու համար ամեն օր քրտնաջան աշխատում են:

Ինձ համար մեծ բախտավորություն է եղել մասնակցել «ԿԱԶԱ»-ի կյանքի կեսին ու պատիվ՝ ստանձնել այն ղեկավարելու պատասխանատվությունը վեց տարի շարունակ:

«ԿԱԶԱ»-ի տնօրեն Անահիտ Մինասյան

01

სტუდენტული
კულტურა

1997թ. հոկտեմբերին Սիրվարդ Գազանճեան-Փերսնի ղեկավարած շվեյցարական «Կոմիտաս» երգչախումբն ընկերների հետ եկավ մեծն երաժշտի հայրենի հողում նշելու իր տասնամյակը և երկու համերգ տվեց Երևանում: Ցնցված հնամյա այս ժողովրդի մարդկային և մշակութային հարստության ու նրա սոցիալ-տնտեսական երերուն ներկայի միջև եղած մեծ տարբերությունից՝ երգչախմբի մի քանի անդամներ և նրանց ընկերները Շվեյցարիա վերադարձին հիմնեցին «Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան» բարեգործական միությունը՝ աջակցելու համար հայերին երկիրը ոտքի կանգնեցնելու իրենց ջանքերում:

2001թ. «ԿԱՉԱ»-ն Հայաստանում գրանցվեց որպես շվեյցարական մարդասիրական հիմնադրամ: Այսպես է սկսվում «ԿԱՉԱ»-ի պատմությունը, որն իր գործունեությունը ծավալել է՝ ուղղորդվելով այն պրոֆեսիոնալ մակարդակի հասցնելու մշտական մտահոգությամբ և ավելի ու ավելի ճշգրիտ թիրախավորելով այն կարիքները, որոնց հանձն էր առել արձագանքել:

Եռակի «խոցված» մի երկրում (1988թ. դեկտեմբերի աղետալի երկրաշարժ, խորհրդային կարգերի փլուզում, Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) պատերազմ), որը դժվարանում է ոտքի կանգնել և ստանձնել տասը դար ի վեր հայերի կողմից այդքան երազված անկախությունը, հիմնադրամի աջակցությունը ստացավ նախ **մարդասիրական** ուղղվածություն: Աջակցություն, որ ցուցաբերվեց մասնավորապես Երևանի երկու մանկատների, ինչպես նաև Գյումրու հարյուրավոր կարիքավոր ընտանիքների:

Չուգահեռաբար, իրականացվեցին 40 **շինարարական** նախագծեր՝ ուղղված ենթակառուցվածքների (ջրամատակարարում, գազամատակարարում), դպրոցների ու գիշերօթիկների, բժշկական ու հասարակական նշանակության հաստատությունների վերակառուցմանը և վերանորոգմանը. տեղի բնակչության առաջնային կարիքների բավարարմանը նպաստելը դարձել էր հրամայական, որպեսզի հնարավոր լիներ անցնել հիմնադրամի նշանակետում առնված հաջորդ մակարդակին, այն է՝ մարդկանց անձնային զարգացումը:

Չարգացում, որին «ԿԱՉԱ»-ն որոշեց նպաստել **կրթության** օգնությամբ՝ համոզված լինելով, որ դա ամենատևական միջոցն է՝ ստեղծելու ժողովրդավարական հասարակություն, որն ունակ կլինի ապահովելու իր անդամների ինքնաիրականացումը և իր երկրի համաչափ ու համերաշխ կայուն զարգացումը: Ուստի հենց սկզբից՝ մարդասիրական նախագծերին զուգահեռ, հիմնադրամը ներգրավվեց կրթության և վերապատրաստման ոլորտներում: 2008թ. սկսած կրթությունը դարձավ նրա գործունեության գերակա (այսօր արդեն՝ նաև գերազանցության) ոլորտը՝ քաղաքացիական կրթությունը և հայաստանյան հասարակության ու պետության ներսում որոշումների կայացման գործընթացներին երիտասարդների մասնակցությունը խթանող ծրագրերով, վերապատրաստման առկա և առցանց դասընթացներով, տնտեսական և սոցիալ-մշակութային ինտեգրմանն ուղղված աջակցությամբ՝ ի նպաստ ինչպես տեղացիների, այնպես էլ սիրիահայերի և Հայաստանում ապաստան գտած տեղահանված այլ անձանց, միաժամանակ զարգացնելով նաև ոչ ֆորմալ ուսուցման մեթոդներ:

Կայուն զարգացման «ԿԱՉԱ»-ի տեսլականն իր արտահայտությունն է գտնում նաև հայկական մի քանի գյուղերում հիմնադրամի նախաձեռնած կամ նրա աջակցությամբ իրականացվող **գյուղատնտեսական** ծրագրերում, որոնց նպատակն է օգնել գյուղացիներին մնալ իրենց երկրում՝ հարազատ հողի վրա:

Միևնույն հենքն ունեն նաև «ԿԱՉԱ»-ի՝ որդեգրած մոտեցումները **գրասաշրջության** ոլորտում, որից սկիզբ է առել հիմնադրամի պատմությունը և որը մեծապես նպաստել է նրա զարգացմանը: Այստեղ առաջնահերթությունը տրվում է մարդկանց և շրջակա միջավայրի նկատմամբ հոգածությանը թե՛ հիմնադրամի կողմից մշակվող անհատականացված երթուղիների, թե՛ Երևանում և Գյումրիում նրա կողմից առաջարկվող հյուրատների պարագայում:

«ԿԱԶԱ»-ի կանոնադրությունը

Ամփոփագիր՝ մեր արժեքների

Սույն Կանոնադրությունը, լինելով Շվեյցարիայում և Հայաստանում երկարատև համատեղ քննարկումների արդյունք, նպատակ ունի ընդգծել մեր ինքնությունը և ուղղորդել մեզ մեր գործունեության ընթացքում՝ ծառայելով որպես միասնական հարթակ: Եվրոպայում և Հայաստանում «ԿԱԶԱ»-ի մաս են կազմում կամավորներն ու աշխատակիցները, որոնք ստորագրում են սույն փաստաթղթի ներքո և կյանքի են կոչում նրա դրույթները:

Մեր տեսլականը

Առանձնահատուկ կարևորություն տալ բաց և ինքնուրույն քաղաքացիներից կազմված այնպիսի հասարակության կայացմանը, որի անդամները հանձն են առել էական փոփոխությունների դերակատարներ լինել արագ զարգացող ժամանակակից աշխարհում:

Մեր նպատակը

Աջակցել իրենց երկրի կայուն զարգացմանը հետամուտ հայերին, որոնք ժողովրդավարորեն ներգրավվում են Հայաստանի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքում:

Մեր արժեքները

- խթանել անձի նկատմամբ համապարփակ մոտեցումը,
- աջակցել նրան մասնագիտական և քաղաքացիական զարգացման ճանապարհին,
- ձգտել սոցիալական և համերաշխ տնտեսակարգի ներդրմանը՝ որպես երրորդ ուղի համայնապաշտության և անհատապաշտության միջև:

Մեր առաջնահերթ նպատակները

- արձագանքել հստակ կարիքների՝ ի սպաս ամենակարիքավորների,
- խրախուսել վերապատրաստումը՝ զուգահեռաբար զարգացնելով գիտելիքներ, հմտություններ և անձնային ու սոցիալական որակներ,
- թափ հաղորդել քաղաքացիական և բնապահպանական գիտակցության ու համերաշխության դրսևորումներին,
- նպաստել կանանց առաջխաղացմանը,
- նպաստել միջմշակութային երկխոսությանը,
- տարածել ֆրանսախոսությունը, ֆրանկոֆոն մշակույթներն ու արժեքները,
- զարգացնել անհատականացված և այլընտրանքային զբոսաշրջություն, որն անմիջական առևտրային մեջ է տեղի իրականության և բնակչության հետ:

Մեր մեթոդները

- Նախապատվությունը տալ դինամիկ մոտեցումներին, որոնք խթանում են նախաձեռնողությունը,
- կերտել կառուցվածքներ, որոնք համադրում են աստիճանակարգությունն (հիերարխիա) ու մասնակցային կառավարումը,
- ճկունորեն համակցել հավատարմությունն ու ստեղծարարությունը, ավանդույթների պահպանումն ու նորարարության ձգտումը:


Մեր գործունեության ոլորտները

- մարդասիրություն
- շինարարություն
- կրթություն
- գյուղատնտեսություն
- զբոսաշրջություն

Մեր առջև դրված մարտահրավերը. թող որ մեր հույսը վարակիչ լինի «ԿԱԶԱ»-ի և Հայաստանի համար:

Լոգան և Երևան, 20 օգոստոսի 2012թ.

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ



Շվեյցարիայում



«ԿԱԶԱ»-Շվեյցարիայի անդամներ են համարվում այն անձինք, որոնք նվիրատվություն են կատարում կանոնավոր հովանավորության կամ մեկանգամյա փոխանցման տեսքով, կամ ակտիվորեն մասնակցում են միության գործունեությանը: Նրանք հրավիրվում են մասնակցելու տարեկան **Ընդհանուր ժողովին**, որը նշանակում է Հանձնաժողովի անդամներին և վավերացնում կարևոր մոտեցումներն ու որոշումները:

«ԿԱԶԱ»-Շվեյցարիայի հանձնաժողովը բաղկացած է Ընդհանուր ժողովի կողմից ընտրված 7-9 անդամներից, որոնք ներգրավված են ամբողջովին կամավորական հիմունքներով: Հանձնաժողովը տարեկան 8-10 նիստ է անցկացնում և իր ուժերն է ներդնում՝ Հայաստանում «ԿԱԶԱ»-ի գործունեությանը մարդկային և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար՝ հիմնադրամի **Հոգաբարձուների խորհրդի** հետ համատեղ:

Հայաստանում



«ԿԱԶԱ»-Հայաստանի **հոգաբարձուների խորհուրդը** կազմված է շվեյցարացի/եվրոպացի և հայ անդամներից: Լինելով «ԿԱԶԱ»-ի կանոնադրության երաշխավորը՝ այն աջակցում է հիմնադրամի ընդհանուր գործունեությանը Հայաստանում՝ սերտ համագործակցելով շվեյցարական հանձնաժողովի հետ:

Հոգաբարձուների խորհրդի կողմից նշանակված **տնօրենը** պատասխանատու է Հայաստանում «ԿԱԶԱ»-ի ամբողջ գործունեության համար: Նա ղեկավարում է հիմնադրամը Կառավարման խորհրդի հետ միասին՝ հիմնվելով մասնակցայնության և համերաշխության սկզբունքների վրա: Լինելով խորհրդակցական մարմին՝ Կառավարման խորհուրդը բաղկացած է հիմնադրամի ղեկավար կադրերից և նրա գործունեության ոլորտների պատասխանատուներից:


Հիմնադրամի ծրագրերի պատշաճ իրականացումն ապահովվում է Երևանում և Գյումրիում գործող մոտ 50 աշխատակիցների և 100 կամավորների շնորհիվ:



Շվեյցարական հանձնաժողովի, հոգաբարձուների խորհրդի և հիմնադրամի թիմի անդամները

transjunktiv nlsjtu

02







ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ

Ձեր աչքերի առաջ այն համայնքների քարտեզն է, որոնցում «ԿԱԶԱ»-ն գործունեություն է ծավալել իր գոյության 20 տարիների ընթացքում՝ տարբեր մակարդակներով: Գործունեության վայրերի ընտրությունը արդյունք է բազմաթիվ, հաճախ ոչ սովորական հանդիպումների և տեղում արձանագրված կարիքների, որոնց հիմնադրամը ցանկացել է արձագանքել, հատկապես՝ երկրի հյուսիսում:

Մարդասիրության պատկերակը հաճախ ուղեկցվում է վերապատրաստման պատկերակով. «ԿԱԶԱ»-ն միշտ նախապատվությունը տվել է երկարաժամկետ զարգացմանը, ինչով էլ բացատրվում է նրա ձգտումը՝ տարբեր վերապատրաստումների հնարավորություն տալու այն մարդկանց, որոնց աջակցում էր ֆինանսապես՝ նպաստելու համար վերջիններիս ինքնուրույնությանը:

Միևնույն սկզբունքով գյուղատնտեսական ծրագրերը հաճախ հաջորդում են շինարարական ծրագրերին: Մտահոգիչ արտագաղթ արձանագրելով այն գյուղերում, որոնցում վերակառուցում էր դպրոց ու ենթակառուցվածքներ՝ «ԿԱԶԱ»-ն ցանկացավ աջակցել գյուղացիներին և օգնել նրանց՝ իրենց ընտանիքների հետ միասին մնալ հարազատ հողում:



ԴՆՅԱՆՈՒԹՅՈՒՆ



«Սովորեցնել ձուկ որսալ՝ պարզապես ձուկ նվիրելու փոխարեն»

«ԿԱԶԱ»-ի պատմությունը սերտորեն կապված է Հայաստանի հյուսիսի աղետոյալ շրջանների հետ, որոնց տեսքը երկրաշարժից անգամ գրեթե 30 տարի անց դեռ վիատեցնող է՝ արդյունաբերական բազմաթիվ լքված գործարաններ ու կիսավեր շինություններ, որոնք կարծես ուրվականները լինեն երբեմնի եռուն կյանքի, խորհուրդով ճանապարհներ, ամբողջովին «դոմիկ»-ներից կազմված թաղամասեր, կիսադատարկ կամ գրեթե ամբողջությամբ ֆեմինիզացված գյուղեր՝ հաշվի առնելով ապրուստի միջոց վաստակելու նպատակով հաճախ Ռուսաստան մեկնած հայրերի ու որդիների բացակայությունը:

Իր հիմնադրումից ի վեր «ԿԱԶԱ»-ն, ինչպես շատ անհատներ ու օտարերկրյա կամ միջազգային կազմակերպություններ, որոնք բացահայտում էին երկրաշարժ և պատերազմ վերապրած Հայաստանը, մարդասիրական աջակցություն է ցուցաբերել առաջնահերթորեն երկրի հենց այս շրջաններում (սակայն նաև Երևանում, մասնավորապես՝ գիշերօթիկներում):

ՀՈՎԱՆԱԿՈՐՅԱԼ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Ըստ պաշտոնական տվյալների՝ աղքատ է Հայաստանի բնակչության մեկ երրորդը (29,8%): Ընդ որում ամենաբարձր ցուցանիշը Հայաստանի ողջ տարածքում բաժին է ընկնում Շիրակի մարզին. այստեղ աղքատության շեմին է գտնվում բնակչության 45%-ը*:

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

«ԿԱԶԱ»-ի կողմից ընտանիքներին տրվող աջակցությունն այժմ իրականացվում է հետևյալ կերպ՝

- առաջնահերթության տրամադրում մանկահասակ երեխաներ ունեցող, ֆինանսապես անկայուն ընտանիքների աջակցությանը, որոնք այդ իրավիճակից դուրս գալու և համագործակցելու կամք են ցուցաբերում,
- նյութական բազային օգնության տրամադրում (ուտելիք, ջեռուցում). հարկ է նշել, որ ընտանիքներն իրենք են կատարում իրենց ամենամսյա գնումները՝ հետևելով սոցիալական աշխատողի խորհուրդներին և ելնելով իրենց կարիքներից: Այսպիսով նրանք իրենց առավել պատասխանատու են զգում, սովորում են բյուջե տնօրինել և ինքնուրույն լինել,
- «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամի կողմից իրականացվող անհատական վերահսկողություն, որը ներառում է ընտանիքների կարիքների գնահատում, սոցիալական աշխատողի պարբերական այցեր ընտանիքներ, հոգեբանական խորհրդատվություններ, ինչպես նաև հիգիենայի և մանդակարգի կանոնների վերաբերյալ դասեր, ծնողների դպրոց,
- վերապատրաստման դասընթացներ անցնելու հնարավորություն՝ մասնագիտական (վերա)ներգրավման նպատակով,
- կապի ապահովում «արտաքին աշխարհի» հետ (դատական, բժշկական ծառայություններ և այլն):

* http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

Վկայություն

Ամուսնու վաղաժամ մահվան հետևանքով 3 անչափահաս երեխաների հետ մենակ մնացած Զրիստինե Չաբարյանն աջակցության և խորհրդի կարիք ուներ: Ի դեմս «ԿԱԶԱ»-ի նա գտավ նեցուկ. 4 տարի շարունակ հիմնադրամը Զրիստինեին ֆինանսական և սոցիալ-հոգեբանական աջակցություն է ցուցաբերում՝ «Արևամանուկ» հիմնադրամի հետ համագործակցությամբ: Մթերքի գնման (և ջեռուցման՝ հաշվի առնելով Շիրակի ցրտաշունչ ձմեռները) համար տրամադրվող ամենամսյա նյութական օգնությունից բացի «ԿԱԶԱ»-ն ֆինանսավորեց նաև Զրիստինեի աչքերի վիրահատությունը, որի տեսողությունն օրեցօր վատթարանում էր ծանր հիվանդության պատճառով: Միևնույն ժամանակ, մի բանի հոգեբանների միահամուռ աշխատանքն օգնեց երիտասարդ մայրիկին վերադառնալ ակտիվ կյանքի: «Ի՞նչ փոխվեց իմ կյանքում այս տարիների ընթացքում: Շատ բան: Ես ինձ ապահով զգացի: Իմացա, որ մենակ չեմ իմ հոգսերի հետ, և դրանց ծանրությունն ինձ համար տանելի դարձավ: Վերականգնեցի աշխատանքս դպրոցում, որտեղ այժմ շարունակում եմ ուսուցչին և անգլերեն դասավանդել: Հոգեթերապիայի և («ԿԱԶԱ»-ի) զբաղվածության աջակցության ծրագրին մասնակցության շնորհիվ վերագտա ինքնավստահությունս: Ես անգամ նորից սկսեցի գործել», - անկեղծանում է Զրիստինեն: Ավելին՝ նա երազում է մի օր գործվածքների սեփական ֆաբրիկան բացել:



Խոսք համագործակցից

«Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամի տնօրեն Արմինե Գմյուր-Կարապետյան

«Մեր համագործակցությունը ծնվեց «ԿԱԶԱ»-ի ցանկությունից՝ մասնագիտական մակարդակի հասցնելու ընտանիքների հովանավորության իր ծրագիրը՝ դարձնելով այն ավելին, քան զուտ ֆինանսական օգնությունը: Տարիների ընթացքում այդ գործակցությունը շատ է զարգացել: Այսօր «ԿԱԶԱ»-«Արևամանուկ» մոդելը լավ է աշխատում և իր որդեգրած մոտեցմամբ հստակ տարբերվում է քաղաքում իրականացվող նմանատիպ այլ ծրագրերից: «Օգնեք մեզ օգնել ձեզ». սա եկեք մենք խնդրում մեր շահառուներին, որպեսզի դարձնենք նրանց սեփական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների դերակատարներն ու չնչենք սահմանը տվողի և ստացողի միջև»:



Զրիստինեի դեպքը՝ որպես «ԿԱԶԱ»-ի շնորհիվ վերափոխված կյանքի համեստ մի պատմություն, մեկն է տասնյակ օրինակներից: Սակայն «ԿԱԶԱ»-ն դեռ շատ անելիք ունի, որպեսզի կարողանա աջակցել ավելի շատ ընտանիքների և նպաստել Հայաստանում աղքատության ու հոռետեսության դեմ պայքարին:



Նվիրատու տիկին Լյուսիան Շտումպը՝ հովանավորյալ ընտանիքի հետ

Հայ երիտասարդների 24,3%-ը չի շարունակում իր բարձրագույն կրթությունը տեղական համալսարաններում ուսման վարձերի բարձր լինելու պատճառով: Վերջիններս տատանվում են տարեկան 200 000 դրամից (400 շվեյցարական ֆրանկ) մինչև ավելի քանի մեկ միլիոն դրամի (2 000 շվեյցարական ֆրանկ) սահմաններում, մինչդեռ 2017թ. նվազագույն աշխատավարձը Հայաստանում չէր գերազանցում 55 000 դրամը (110 շվեյցարական ֆրանկ): Իսկ եթե նշենք նաև, որ երիտասարդների 1/3-ը գործազուրկ է, կարելի է փաստել հետևյալը՝ բարձրագույն կրթությունը Հայաստանում գործնականում հասանելի չէ բոլորին*:

Եթե միայն պետպատվեր համակարգում սովորելու իրավունք ստացած խիստ սահմանափակ թվով ուսանողների թվին չեք պատկանում կամ չեք օգտվում անհատների կամ տեղական և օտարերկրյա տարբեր հիմնադրամների կողմից շնորհվող մասնավոր կրթաթոշակներից, որոնց թվում է «ԿԱԶԱ»-ն:

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

- կրթաթոշակների տրամադրում սոցիալ-տնտեսական ծանր վիճակում գտնվող ուսանողների՝ տեղական համալսարաններում ուսանելու համար, առաջնահերթորեն Գյումրիում և Երևանում,
- ուսանողների շահագրգռվածության և լրջության կարևորում, ինչպես նաև նրանց ակադեմիական արդյունքների վերահսկողություն՝ որպես ֆինանսավորման երկարաձգման պայման,
- կամավորական հիմունքներով հիմնադրամի կյանքին մասնակցության խրախուսում՝ «ԿԱԶԱ»-ի այլ կամավորների և շահառուների հետ միասին:

Վկայություն

Ուսանող Գուրգեն Աթանեսյանը «ԿԱԶԱ»-ի մասին լսել էր ընկերներից և որոշեց դիմել հիմնադրամին՝ կրթաթոշակ ստանալու նպատակով: Նրա բարձր գնահատականներն ու մոտիվացիան համոզիչ եղան: «ԿԱԶԱ Գյումրի» առաջին իսկ այցից Գուրգենը գտավ իր տեղը և ակտիվորեն ներգրավվեց կենտրոնի աշխատանքներում, ինչը թույլ տվեց նրան ոչ միայն շարունակել բարձրագույն կրթությունը, այլ նաև ավելի ուշ աշխատանքի անցնել Թումո ստեղծարար տեխնոլոգիաների հայկական հեղինակավոր կենտրոնում՝ որպես ուսուցանող մարզիչ: «ԿԱԶԱ»-ի հետ Գուրգենի ամենակարևոր ձեռքբերումը.



«Ես սովորեցի ինքս ինձ ճանաչել, տարրական հարցեր տալ, որոնց պատասխաններն իրականում հիմնարար նշանակություն ունեն, հստակեցնել երազանքներս և զուգահեռաբար վեր հանել դրանց իրականացման համար ունեցած ունակություններս»:

* <http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13148.pdf> (անգլ.)

Հայաստանում գոյություն չունեն պետական հաստատություններ, որտեղ երեխաներն ու դեռահասները կարող են զարգացնել իրենց անձնային որակներն ու սոցիալական հմտությունները: Հաճախ մռայլ ու նեղիկ կացարանների և դեռևս բավական ձևապաշտ դպրոցի միջև պակասում է մի երրորդ միջավայր, որը թույլ կտա խթանել սրանց ստեղծարար միտքն ու նախաձեռնողությունը:

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

Գյուճարիում մայրեզրերին նստած բազմաթիվ երեխաների տեսարանը, որոնք անգամ միմյանց հետ չէին խաղում, ցնցել էր «ԿԱԶԱ»-ի հիմնադիրներին այդ քաղաք իրենց առաջին իսկ այցի ժամանակ և ցանկություն առաջացրել նվիրել նրանց չեզոք, ոչ ֆորմալ միջավայր՝ սոցիալ-ուսուցողական ծրագրի միջոցով, որն այսօր առաջարկում է.

- խաղային բնույթի ուսուցողական ժամանց, արվեստի (երգ, պար, թատրոն, լուսանկարչություն), շախմատի աշխատարաններ, լեզվի և համակարգչային դասընթացներ՝ այն ամենն, ինչ թույլ կտա երեխաներին արտահայտել իրենց ստեղծարարությունը, շփվել հասակակիցների հետ և հանդես գալ նախաձեռնություններով, ինչպիսին, օրինակ, մի խումբ դեռահասների կողմից ծրագրի շրջանակներում վերջերս ստեղծված էկոլոգիական ակումբն է,
- մասնագիտական ուղղորդում՝ երևույթ, որը դեռևս գրեթե գոյություն չունի Հայաստանում,
- հանդիպումներ տարբեր ոլորտների փորձագետների հետ, որոնք նպաստում են երիտասարդներին մտահոգող թեմաների շուրջ քննարկումների կազմակերպմանն ու մտքերի փոխանակմանը,
- մշակութային այցեր՝ սեփական քաղաքը և երկիրը ճանաչելու նպատակով,
- Եվրոպայից եկած երիտասարդների հետ հանդիպումների և աշխատարանների միջոցով միջմշակութային երկխոսության հանդեպ բաց և առողջ մոտեցման ձևավորում,
- աջակցություն ծնողներին, որոնք հաճախ ուղղորդման կարիք ունեն անցումային այդ բարդ շրջանում:

Վկայություն

Նախ մասնակից, ապա՝ նույն ծրագրի կամավոր, ինչպես նաև հիմնադրամի երիտասարդական ակումբների ակումբավար Արթուրը նշում է. «Ծրագրում ակտիվ մասնակցությանս շնորհիվ ես կարողացա իմ մեջ բացահայտել և զարգացնել բնավորության այնպիսի գծեր և ունակություններ, որոնք չէի էլ կարծում, թե ունեմ: Նախկինում ես դժվարանում էի հաղորդակցվել ինձ նման երիտասարդների հետ և հանդուրժող լինել այս կամ այն հարցի նկատմամբ: «ԿԱԶԱ»-ի հետ ես շատ ավելի հասուն դարձա»: Այսօր նա շրջում է Ծիրակի մարզի գյուղերում՝ որպես «Կարիտաս» ՀԿ-ի ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման ծրագրի կամավոր, իսկ «ԿԱԶԱ»-ում շարունակում է մասնակցել Վիթիպեդիա հանրագիտարանի հայերեն հոդվածների հարստացման նախաձեռնությանը:



Այսպիսով, կապերը չեն դադարում դեռահասության ավարտին. շատերը՝ ինչպես Արթուրը, վերադառնում են «ԿԱԶԱ» որպես երիտասարդական ակումբների ակումբավարներ կամ մասնակցում հիմնադրամի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին:



ԿԱՐԵՎՈՐ ԹՎԵՐ

- տարեկան 20-40 հովանավորյալ ընտանիք,
- 244 հովանավորյալ ընտանիք՝ մինչ այսօր,
- տարեկան 20 կրթաթոշակի տրամադրում, ինչպես նաև կրթաթոշակներ՝ «ԿԱԶԱ»-ում կազմակերպվող դասընթացներին մասնակցության համար,
- ընդհանուր առմամբ 316 կրթաթոշակառու՝ 1998 թ.-ից վեր,
- աշխատարաններ տարեկան 100-200 երեխաների և դեռահասների մասնակցությամբ՝ սոցիալ-կրթական ծրագրի շրջանակներում,
- ծրագրին մասնակցած 1000 երեխա և դեռահաս՝ մինչ այժմ:



အမှတ်တံဆိပ်



«Դոմիկներում» կամ կիսավեր շինություններում ժամանակավորապես տեղակայված դպրոցներ, համարյա գոյություն չունեցող ենթակառուցվածքներ՝ այսպիսի իրականություն հառնեց «Կոմիտաս» երգչախմբի անդամների առաջ, երբ 1997թ. առաջին անգամ այցելեցին Հայաստան: Հենց այդ փաստն էլ ստիպեց «ԿԱԶԱ»-ին բազմաթիվ շինարարական նախագծեր իրականացնել՝ արձանագրված տարրական կարիքները հոգալու համար:

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

Մինչ օրս «ԿԱԶԱ»-ն ղեկավարել է շինարարական և ենթակառուցվածքների ստեղծման/վերականգնման 40 նախագիծ պետական և մասնավոր կազմակերպությունների ու բարեկամների աջակցության շնորհիվ՝ 11 միլիոն շվեյցարական ֆրանկ ընդհանուր բյուջեով (ֆինանսավորման առյուծի բաժինը հատկացվել է «Արմենիանոս» հիմնադրամի (Լիխտենշտեյն) կողմից, որը ֆինանսավորել է իրականացված նախագծերի 2/3-ը): Նախագծերն իրականացվել են հոգուտ 4 հիմնական շահառուների՝

Հայաստանի Հանրապետություն՝

- 10 միջնակարգ դպրոց,
- 2 երաժշտական դպրոց՝ Երևանում (Սայաթ-Նովայի անվան) և Գյումրիում (Շերամի անվան),
- ենթակառուցվածքներ (ջրամատակարարում, գազամատակարարում) Գոգարան, Սարահարթ և Շենավան գյուղերում:

«Շեն» ՀԿ՝

- համայնքային կենտրոններ, դպրոցի և տների վերանորոգում, խմելու ջրի, ոռոգման և գազամատակարարման ցանցի ապահովում, արևային ջորանոցներ հայաստանյան տարբեր գյուղերում:

«Արաբկիր» հիմնադրամ՝

- «Արաբկիր» երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ,
- «ԱրԲԵՍ» առողջության կենտրոն Երևանում՝ ցերեկային խնամքի և բուժման կենտրոնի հետ միասին,
- հաշմանդամ երեխաների համար նախատեսված վերականգնողական առողջարանային ճամբար Ապարանում,
- վերականգնողական կենտրոն Իջևանում:

«ԿԱԶԱ»՝

- «ԿԱԶԱ»-ի վարչական գրասենյակ Երևանում,
- «Էսպաս» կենտրոն Երևանում,
- «ԿԱԶԱ Գյումրի» կենտրոն,
- հյուրատներ Երևանում և Գյումրիում:

Իրականացված նախագծերի պարզ թվարկումը թույլ չի տալիս պատկերացում կազմել այն բոլոր տարատեսակ դժվարությունների մասին, որոնք հանդիպել են դրանց իրականացման ճանապարհին՝ դերակատարների (բանվոր, ճարտարապետ, ձեռնարկատեր, քաղաքապետ, նվիրատու) մտածելակերպի և իրականության տարբերություններ, որակյալ նյութեր ձեռք բերելու հետ կապված դժվարություններ և այլն: Այս փորձառությունները, սակայն, շատ բան են սովորեցրել՝ թույլ տալով յուրաքանչյուր նախագծի հետ զարգացնել ավելի ու ավելի մշակված մեթոդաբանություն հետագայի համար, որը նախատեսում է՝


- սոցիալական փոխազդեցությունների, գործընկերների և նախագծի կայունության նախնական վերլուծություն,
- հստակ պլանավորում՝ գործնական պահանջներին համապատասխան,
- ճշգրիտ և կանոնավոր ֆինանսավորում՝ միտված նպաստելու շինարարական աշխատանքների արագ առաջընթացին,
- ամենաբարձր հանդիպումներ շինիրապարակի բոլոր դերակատարների մասնակցությամբ, ինչը նպաստում է մտքերի փոխանակմանը, աշխատանքների առավել հաջող համակարգմանն ու որոշումների արագ կայացմանը,
- ֆինանսական և ֆիզիկական աուդիտ:

Հիմնվելով ոլորտում իր մեծ փորձի, ազնիվ և խելամիտ ձեռնարկատերերի ցանցի և մարդասիրական գործունեության համար հարկերից ազատման իրավունքի (-20%) վրա՝ «ԿԱՉԱ»-ն ցանկացած պահի ունակ է ղեկավարել նոր նախագծեր՝ երրորդ կողմի առաջարկով:

Խոսք համագործակցից

«Արաբկիր» հիմնադրամի հիմնադիր, ՀՀ Ազգային ժողովի ներկայիս նախագահ Արա Բաբլոյան

«Ըստ իս՝ մեր համագործակցության մեջ կարևորը միասին զարգացրած ծրագրերի տևականությունն է. շենքերի կառուցումն ավարտվել է, սակայն բեղմնավոր գործունեությունը դրանցում շարունակվում է մինչ այսօր: Մեկ այլ տեսանկյունից՝ նայելիս՝ մեր համագործակցությունն օգնել է մեզ ոչ միայն զարգացնել առողջապահական ծրագրեր, այլ նաև փոխել մեր մտածելակերպերը, մեր աշխարհայացքները, մարդու, երեխաների իրավունքների հանդեպ մեր մոտեցումը: Հիշողությանս մեջ վառ եմ պահում միասին անցած անշուշտ երկար, սակայն արգասաբեր ճանապարհը»:



«ԱրԲԵՍ» առողջության կենտրոնը Երևանում

«ԿԱԶԱ»-Ի ՂԵԿԱՎԱՐԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ 40 ՆԱԽԱԳԾԵՐԸ

Ի նպաստ Հայաստանի Հանրապետության՝

Հաստատություն	Տարի	Բյուջե (ՀՖ*)
1. Ախուրյանի վարժարան	2005 - 2008	260 100
2. Արգինայի դպրոց (ջեռուցում և կահավորում)	2002 - 2003	67 000
3. Գյումրու թիվ 33 դպրոց	2005 - 2006	1 053 200
4. Գոգարանի դպրոց	2000 - 2008	929 300
5. Եղնաջուրի դպրոց	2005 - 2007	145 800
6. Երևանի թիվ 5 և 11 հատուկ դպրոցներ	2001 - 2006	19 000
7. Թալինի վարժարան	2003 - 2007	643 400
8. Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր	2000 - 2004	173 300
9. Մաստարայի դպրոց (մասնաշենք Ա)	2006 - 2008	864 000
10. Շերամի անվան երաժշտական դպրոց	2006 - 2016	538 600
11. Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց	2005 - 2006	83 000
Ընդհանուր		4 772 380 43%

Ի նպաստ գյուղական համայնքների՝

Համայնք	Տարի	Բյուջե (ՀՖ)
1. Այրում (ոռոգում)	2005	90 000
2. Այրում (սառնարան)	2006	10 800
3. Արգինա (Արգինա-Արտենի ճանապարհ)	2003	9 000
4. Արգինա (արևային չորանոցներ)	2003	72 000
5. Արգինա (պահածոների ֆաբրիկա)	2005	89 000
6. Արգինա (ջրամբար)	2003	12 000
7. Գեղաշեն (ջուր)	2003	9 000
8. Գոգարան (ջուր)	2009	45 000
9. Գոգարան, Սարահարթ, Շենավան (գազ)	2007 - 2008	224 000
10. Եղնաջուր (առաքելական եկեղեցի)	2006	18 500
11. Եղնաջուր (ենթակառուցվածք)	2006 - 2007	276 900
12. Լուսակն (համայնքային կենտրոն)	2006 - 2007	72 500
13. Մարգահովիտ (հատակագծեր)	2006	13 600
14. Նորակերտ (համայնքային կենտրոն)	2008	82 500
15. Շենիկ (ոռոգում)	2005	15 000
16. Սեմյոնովկա (ջուր)	2005	14 000
Ընդհանուր		1 035 300 9%

* Շվեյցարական ֆրանկ

Ի նպաստ «Արաբկիր» հիմնադրամի՝

Հաստատություն	Տարի	Բյուջե (ՀՀ)
1. Ապարանի առողջարանային ճամբար	2006 - 2007	378 700
2. «ԱրԲԵՍ» կենտրոն (փուլ 2)	2004 - 2005	525 500
3. Երևանի «Արաբկիր» բժշկական համալիր (լաբորատորիա)	2006	171 600
4. Երևանի «Արաբկիր» բժշկական համալիր (մասնաշենք Դ)	2006 - 2008	960 000
5. Իջևանի վերականգնողական կենտրոն	2007 - 2008	110 300
Ընդհանուր		2 146 100 20%

Ի նպաստ «ԿԱԶԱ» հիմնադրամի՝

Կառույց	Տարի	Բյուջե (ՀՀ)
1. Գյումրու «Արևամանուկ» շենք	2002 - 2008	1 454 400
2. Երևանի «Էսպաս» կենտրոն	2002, 2005, 2014	370 600
3. «ԿԱԶԱ»-ի գրասենյակ	1999, 2005	68 500
4. Հյուրատներ Երևանում	2006, 2014	388 000
Ընդհանուր		2 281 700 21%

ԱՅԼ

«Ընտանիք», «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ներ, տարբեր սարքավորումներ

746 520

ԸՆԴՀԱՆՈՒՐ՝

11 000 000 ՀՀ



«Արևամանուկ» շենքը Գյումրիում



Գյումրու թիվ 33 դպրոցը



2023-2024



Սակայն աշխարհը փոխել ցանկանալուց առաջ լավ կլինի սկսել սեփական անձից ու սեփական փոքրիկ անկյունից, սեփական երկրից: Արդ, պատասխանատու քաղաքացիներ ձևավորելը խորհրդային համակարգի ժառանգորդներ հանդիսացող հայկական ավանդապահ դպրոցի ու համալսարանի հիմնական նպատակների մաս դեռևս չի կազմում: Նման իրավիճակում այնպիսի կազմակերպություններ, ինչպիսին «ԿԱԶԱ»-ն է, հանձն են առել մի առաքելություն, որի նպատակն է խրախուսել երիտասարդներին և չափահասներին՝ դառնալ իրենց սեփական կյանքի դերակատարը և առաջ բերել դրական փոփոխություններ հասարակության ներսում:

Հիմնադրամն իր կրթական գործունեությունը ծավալում է մի քանի հարթություններում՝ համատեղելով կարճաժամկետ և երկարաժամկետ տեսլականները: Այսպես, մի կողմից այն խթանում է քաղաքացիական կրթությունը և միջմշակութային երկխոսությունը՝ անհատի և հասարակության մակարդակներում խոր փոփոխությունների հասնելու համար, մյուս կողմից՝ աջակցում երիտասարդների զբաղվածությանը, որպեսզի վերջիններս կարողանան իրենց տեղը գտնել այժմյան աշխատաշուկայում, կամ օժանդակում տեղահանված անձանց սոցիալ-մշակութային և տնտեսական ինտեգրմանը:

ԱԿՏԻՎ ԲԱՐԱՔԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարության իրականացրած մի հետազոտության շրջանակներում հարցված երիտասարդների միայն 31%-ն է հայտնել, թե մտադիր չէ երբևէ լքել երկիրը, մինչդեռ մնացածը նախատեսում է մի օր հեռանալ կամ հարցման պահին արդեն պատրաստվում է երկրից մեկնելուն:*

Տարեցտարի պակասող և ծերացող բնակչության շրջանում «ԿԱԶԱ»-ն քաջալերում է ակտիվ քաղաքացիությունը («Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ») և համայնքային զարգացումը («Երիտասարդները հանուն զարգացման») երիտասարդների շնորհիվ՝ հանձնառություն, որը նրա հիմնական այցեքարտն է:

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

«Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ»

- երիտասարդական թեմատիկ ակումբներ՝ լեզուների, արվեստի, հոգեբանության, բնապահպանության, մարդու իրավունքների և այլ թեմաների շուրջ. իրական հարթակ, որը թույլ է տալիս երիտասարդներին ոչ ֆորմալ միջավայրում շոշափել անհատին և ժամանակակից քաղաքացուն մտահոգող տարբեր թեմաներ, ավելի լավ ճանաչել իրենց շրջակա միջավայրն ու զարգացնել իրենց ստեղծագործ միտքը,
- Երևանում և Գյումրիում իրենց հասակակիցների մասնակցությամբ ակումբներ վարող երիտասարդ կամավորների վերապատրաստում, ուղղորդում և շարունակական վերահսկողություն,
- Նախաձեռնությունների իրականացում, որոնք խրախուսում են երիտասարդներին անցնել ի գործ՝ տեղի խնդիրներին լուծումներ տալու համար:

* <http://www.msy.am/files/post/1463655073-2.pdf>

Վկայություն

Ակումբավարների ընտրության հարցազրույցի ժամանակ Ազգանուշի փորձը չէր, որ որոշիչ եղավ, այլ նրա խանդավառությունն ու անսահման անկեղծությունը: «Այս ծրագրին մասնակցելով՝ ես ցանկանում եմ բարելավել հարաբերություններս հայրիկիս հետ», - հայտարարել էր 20-ամյա աղջիկը: Նրան այդ հնարավորությունն ընձեռվեց: Իսկ երբ վրա հասավ սեփական նախաձեռնությունն առաջարկելու ժամանակը, Ազգանուշը երկար չմտածեց. գլխում արդեն պտտվում էր հարազատ Արշալույս համայնքի երիտասարդների համար ուսուցողական ժամանց նախաձեռնելու միտքը, որպեսզի գունավորեր նրանց գյուղական միապաղաղ առօրյան: Մյուս ակումբավարների՝ իր ծրագրում ներգրավումն էլ իր հերթին կրկնակի արդյունավետ եղավ. նրանք վարակվեցին իրենց համայնքներում նմանատիպ նախաձեռնություններ իրականացնելու մտքով: Այսպիսով, ծրագրի ընթացքում ձեռք բերված փորձը բազմապատկվում է և նոր ձևեր ստանում: Իսկ մինչ այդ, Ազգանուշին հաջողվել է փոխել նաև հոր գերհոգատար վերաբերմունքն իր նկատմամբ և նույնիսկ ստանալ նրա համաձայնությունը Լեհաստանում փոխանակման մի ծրագրի մասնակցելու համար:



«Երիտասարդները հանուն զարգացման»

- աջակցություն շրջաններում նախաձեռնվող երիտասարդական ծրագրերի՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության և երկխոսության միջոցով,
- մասնակիցների վերապատրաստում երիտասարդների մասնակցության, նախագծերի կառավարման և սոցիալական ձեռներեցության վերաբերյալ,
- 9 նախաձեռնության ընտրություն (առաջարկված 20-ից), որոնք ֆինանսավորվել են ծրագրի շրջանակներում և իրականացվել «ԿԱԶՄ»-ի աջակցությամբ:

Վկայություն

«Տրակտորավարուհի Յոփիսիմեն»։ Իենց այսպես են նրան ճանաչում հարազատ Կրաշեն համայնքում և հարևան գյուղերում։ Հայ կնոջ համար բավական անսովոր այս զբաղմունքը Յոփիսիմենի՝ «ԿԱԶԱ»-ի ծրագրին մասնակցության անմիջական արդյունքն է։ «Կրաշենում չկա խաղահրապարակ, որտեղ երեխաները կարող են հետաքրքիր ժամանակ անցկացնել, և սկզբում ես եկել էի «ԿԱԶԱ» նմանատիպ հրապարակի կառուցման ծրագիր առաջարկելու մտադրությամբ։ **Հետագայում գյուղի կարիքների գնահատումը վեր հանեց տրակտոր ձեռք բերելու ավելի հրատապ անհրաժեշտությունը։** Իրականում, չնայած տեխնոլոգիաների զարգացմանը՝ մեր համայնքի բնակիչների միակ օգնականը շարունակում էին մնալ իրենց ձեռքերի ուժն ու բաիերը՝ **հողը մշակելու համար**»։ Այսօր տրակտորը ոչ միայն թեթևացրել է գյուղացիների հոգսը, այլև նրա աշխատանքից ստացված համեստ եկամտի շնորհիվ իրականացել է Յոփիսիմենի սկզբնական երազանքը՝ երեխաների համար խաղահրապարակի կառուցումը, և դա՝ իր համայնքի բոլոր անդամների ուղղակի մասնակցությամբ։



Ծրագրի այլ հաջողությունների թվում կարելի է նշել՝

- Կարբիում բացվեց համայնքի առաջին երիտասարդական կենտրոնը,
- Երևանում մի խումբ դեռահասներ, ինչպես նաև նրանց ծնողներն ու ուսուցիչներն իրազեկվեցին սեռական դաստիարակության հարցերի մասին,
- Վանաձոր քաղաքի և հարակից գյուղերի բնակիչները, որոնց շրջանում հատկապես մեծ թիվ են կազմում վարկային ծանր բեռի տակ հայտնված անձինք, հնարավորություն ստացան բարելավելու բանկային վարկերի պայմանների վերաբերյալ իրենց գիտելիքները,
- Ույծ համայնքում մեղվաբուծությունը նոր մակարդակի վրա դրվեց՝ միաժամանակ աշխատանքով ապահովելով գյուղի երկու հաշմանդամ երտասարդների։

34

Խոսք համագործակցից

«Թրեյներների ազգային թիմ» ՀԿ-ի Նախագահ Արեգ Թադևոսյան

«ԿԱԶԱ»-ի հետ մեր համագործակցությունը սկսել է մոտ 10 տարի առաջ, երբ հիմնադրամը հետաքրքրվեց ոչ ֆորմալ կրթության ոլորտում «Թրեյներների ազգային թիմ»-ի փորձով։ Այսօր մենք միասին իրականացնում ենք ծրագրեր և անդադար մտածում համագործակցության նոր եզրերի մասին, ինչպիսիք, օրինակ, հիմնադրամի կամավորների համար նախատեսված միջմշակութային հաղորդակցության մոդուլներն են կամ սոցիալական ձեռներեցության ծրագիրը։ Ի նպաստ երիտասարդության «ԿԱԶԱ»-ի ամենակարևոր ներդրումը, ըստ իս, նրա որդեգրած մոտեցումն է հիմնադրամի իրականացնում է երկարաժամկետ ծրագրեր, մեծ ներուժ ունեցող երիտասարդների հետ։ Կավելացնեմ նաև համակարգման ողջ աշխատանքը (ձեռնարկ երիտասարդական աշխատողների համար, ուսուցողական խաղեր), որում «ԿԱԶԱ»-ն ցուցաբերում է շատ լուրջ և մասնագիտական մոտեցում՝ ժամանակակից մեթոդների կիրառմամբ»։



Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանում երիտասարդների 1/3-ը գործազուրկ է: Տարեկան հարյուրավոր ուսանողներ ավարտում են իրավաբանության, տնտեսագիտության կամ միջազգային հարաբերությունների ֆակուլտետները, չնայած տեղի աշխատաշուկան տվյալ ոլորտներում այդչափ մասնագետի կարիք չունի: Համալսարանի տված գիտելիքների և գործատուների պահանջած կարողությունների միջև անհամապատասխանությունն ակնհայտ է գրեթե բոլոր ոլորտներում:*

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

Մշտապես զարգացող աշխատաշուկայում երիտասարդներին և չափահասներին ուղղորդելու համար «ԿԱԶԱ»-ն չի դադարում համապատասխանեցնել իր ծրագրերն ու մեթոդները՝ ի նպաստ իր շահառուների մասնագիտական ներգրավվածության: Այս պահին հիմնադրամն առաջարկում է՝

- հստակ թիրախավորված ուսումնական մոդուլներ (ինքնաճանաչում, հետազոտության գործիքներ և այլն),
- անհատական խորհրդատվություններ,
- անհատականացված ուղղորդում աշխատանք գտնելու հարցում՝ հաջողված մասնագիտական փորձ ունեցող կամավորների օգնությամբ (այս բաղադրիչը կոչվում է «Երկուսով աշխատանքի համար»),
- պոտենցիալ գործատուների հետ կապի հաստատում,
- զբոսավարների վերապատրաստում: **

35

**Մանրամասները՝ «ԿԱԶԱ»-ի զբոսաշրջային գործունեությանը նվիրված գլխում:

Վկայություններ

Կրթությամբ իրավաբան Լիլիթ Երեմյանին չէր հաջողվում իր մասնագիտությամբ աշխատանք գտնել: Նա իր երազանքին հասնելու հույսն արդեն կորցնում էր, երբ պատահաբար բացահայտեց «ԿԱԶԱ»-ի ծրագրերը: Կամավորի օգնությամբ եռանդուն փնտրտուքներն ու բաղաբացիական ծառայողի մրցույթին պատրաստությունը տվեցին ցանկալի արդյունքները. այսօր Լիլիթն աշխատում է որպես դատական քարտուղար:



Ծագումով Գվինեայից Լամարանա Ջիբա Բան արդեն 7 տարի է, ինչ ապաստան է գտել Հայաստանում և նույնիսկ մշտական բնակության իրավունք ստացել: Նա սահուն խոսում է հայերեն, սակայն, չնայած Հայաստանում ունեցած իր տարաբնույթ աշխատանքային փորձին՝ կայուն աշխատանք գտնել չէր հաջողվում: «ԿԱԶԱ»-ն օգնեց նրան վեր հանել աֆրիկյան հյուսիս անելու իր տաղանդը: Հիմնադրամի կամավորներից մեկի օգնությամբ Լամարանան կարողացավ ստեղծել հյուսիսի սեփական բրենդը Հայաստանում, ու թեև ծրագիրը դեռևս իրագործման փուլում է, նա արդեն սկսել է պատվերներ ստանալ:

* <http://www.msy.am/files/post/1463655073-2.pdf>

Ըստ վիճակագրության՝ սիրիական ճգնաժամի հետևանքով մինչ օրս Հայաստանում հաստատվել է Սիրիայի մոտ 17 000 քաղաքացի՝ հիմնականում հայկական ծագմամբ: Այսպիսով, ընդունած փախստականների թվով Հայաստանը Եվրոպայում համարվում է երրորդ երկիրը՝ հաշվի առնելով իր սեփական բնակչության թիվը: Երկրում ապաստան են գտել նաև կրկին հիմնականում էթնիկ հայ փախստականներ Իրաքից, Ուկրաինայից և Արցախից (Լեռնային Ղարաբաղ):

Ոչ հայ ապաստան հայցողները և փախստականները (հատկապես Մերձավոր Արևելքից, Աֆրիկայից և Ասիայից) մեծաթիվ չեն, սակայն նմանապես ստանում են պատշաճ աջակցություն*:

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

Արձագանքելով Միավորված Ազգերի Կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) առաջարկին՝ նպաստել տեղահանված անձանց տնտեսական և սոցիալ-մշակութային ինտեգրմանը՝ «ԿԱԶԱ»-ն իր որոշ ոչ ֆորմալ ծրագրեր համապատասխանեցրել է այս նոր թիրախ խմբի կարիքներին: Այսօր հիմնադրամն առաջարկում է.

- աջակցություն տեղահանված ընտանիքների սոցիալական ինտեգրմանը տեղացի կամավորների օգնությամբ, ինչն, անկասկած, երկուստեք հարստացնող փորձառություն է,
- հայերենի դասեր և միջմշակութային հանդիպումներ «Հատուկ կացարան»-ում բնակվող օտարազգի ապաստան հայցողների համար: Հիմնադամի կողմից կազմակերպվող շաբաթական հանդիպումները թարմ շունչ են բերում այս մարդկանց առօրյա, որոնց ապագան դեռևս անորոշ է, և նպաստում են Հայաստանում նրանց կյանքի որակի բարելավմանը,
- մասնագիտական դասընթացներ (կարունձն, խոհարարություն, տորթերի պատրաստում և ձևավորում, վարսահարդարում, մատնահարդարում, դեմքի խնամք և այլն), որոնք իրականացվում են պրոֆեսիոնալ գործընկերների օգնությամբ,
- տեղացի և սիրիահայ երիտասարդների/դեռահասների միջև երկխոսության հարթակ. 2016թ. «ԿԱԶԱ»-ի նախաձեռնած այս ծրագրի նպատակն է ստեղծել մի չեզոք միջավայր, որը կնպաստի այս երկու խմբերի երիտասարդների փոխադարձ բացահայտմանը՝ ելնելով այն փաստից, որ նրանք հաճախ չեն ճանաչում միմյանց՝ կողք կողքի ապրելով իրենց ներփակված աշխարհներում:

Վկայություններ

Սիրիահայ Մարգարիտա Խորոզյանը հնարավորություն է ունեցել մասնակցելու «ԿԱԶԱ»-ի կողմից կազմակերպված երկու դասընթացի՝ խմորեղենի պատրաստում և տորթերի ձևավորում: Նրա եռանդն ու կատարելագործվելու անսպառ ցանկությունն ի վերջո փոխհատուցվեցին. Մեզին ստանում է տորթերի տարբեր պատվերներ և գնալով մեծացնում իր հաճախորդների շրջանակը: «Հայաստանում աշխատանքի նկատմամբ իմ մոտեցումն է փոխվել: Սիրիայում կինը սովորաբար չի աշխատում.

աշխատանքը համարվում է ծանր բեռ: Այստեղ, չնայած սկզբում ստիպված էի աշխատել ապրուստս վաստակելու համար, սակայն աստիճանաբար այդ անհրաժեշտությունը դարձավ իրական հաճույք և ստեղծագործելու բացառիկ հնարավորություն», - նշում է Մեզին:



* <https://www.economist.com/blogs/graphicdetail/2015/09/daily-chart-crisis-context> (անգլ.)



«Երկար ժամանակ ես փնտրում էի մի վայր, որտեղ տեղի և Սիրիայի հայերը հանդիպում են միմյանց, քանի որ նույնիսկ Հայաստանում ընտանիքս, հարազատներս, ընկերներս, ինձ շրջապատող բոլոր մարդիկ Սիրիայից էին: Միևնույն ժամանակ ես ցանկություն ունեի բացահայտելու նոր մարդկանց: Տեղացի և սիրիահայ երիտասարդների երկխոսության ակումբում ես գտա այն, ինչի կարիքն ունեի: Ամեն չորեքշաբթի ես անհամբեր սպասում եմ երեկոյին՝ այնտեղ գնալու համար. չեմ ուզում բաց թողնել ո՛չ մի հանդիպում, ո՛չ մի քննարկում: «ԿԱԶՄ»-ում ասես քո տանը լինես», - նշում է սիրիահայ Շանթ Հայրապետյանը: Ի դեպ, նա նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից «ԿԱԶՄ»-ի աջակցությամբ սիրիահայերի համար կազմակերպվող անգլերենի դասընթացների մասնակիցներից է:



2014թ. Հայաստան նոր ժամանած Օսան Կարագուլյանի ընտանիքը որպես շահառու մասնակցում էր սիրիահայերի սոցիալական ներգրավման ծրագրին: Տեղացի մի հայուհի կամավոր հիմունքներով նրանց ուղղորդում և աջակցում էր երկրում սոցիալ-մշակութային ինտեգրմանն ուղղված տարբեր հարցերում՝ ուսումնառություն, սոցիալական ապահովություն, ժամանց և այլն: Օրինակ, որը վարակիչ եղավ, քանի որ 2015թ. Օսանը որոշեց շարունակել ծրագրին իր մասնակցությունը, միայն թե այս անգամ հենց ինքն էր հանձն առնում դուրս գալ իր ընտանիքի նման մեկ այլ ընտանիքի առաջին քայլերը Հայաստանում:

Ծագումով Ուկրաինայից Ն. Կ.-ն* ապրում է «Հատուկ կացարան»-ում: 57-ամյա այս կինն աչքի է ընկնում բացառիկ էներգիայով և կյանքի նկատմամբ դրական մոտեցմամբ: **Չնայած իր տարիքին՝ նա ջանում է սովորել հայերեն և ինտեգրվել հայաստանյան հասարակությանն ու առօրյային:** Ավելին՝ նշում է, թե մեծ ցանկություն ունի այստեղ սկսելու ձեռներեցության սեփական ծրագիրը, եթե հաջողվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հայթայթել:

*Տվյալ անձի նկարը և անունը չեն հրապարակվում՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

Խոսք համագործակցից

Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ Զրիստոֆ Բիրվիլթ

«Ինտեգրումը գործընթաց է, և յուրաքանչյուրը կարող է դրանում իր ներդրումն ունենալ. հարուստ մարդասերները՝ բնակարան նվիրելով կամ հոգալով վարձակալության ծախսերը, երիտասարդ ուսանողները՝ օգնելով իրենց փախստական ընկերոջը կողմնորոշվել համալսարանական տարածքում: Փախստականների ինտեգրման հարցում «ԿԱԶՄ»-ն Հայաստանում մեր կարևոր գործընկերներից մեկն է, որի հետ համագործակցությունը երեք բառով կորակեմ որպես՝ սերտ, անկեղծ և նորարարական»:



Դժվար է թերագնահատել միջմշակութային երկխոսության կարևորությունը ժամանակակից աշխարհում, հատկապես երբ քննում ենք դրա բացակայությունից բխող հետևանքները՝ արմատականություն, յուրաքանչյուր տարի հազարավոր անմեղ մարդկանց կյանք խլող զինված հակամարտություններ ու ահաբեկչության փորձեր: Ինչպես միջազգային, այնպես էլ միջանձնային մակարդակում «օտար»-ի հանդեպ բաց լինելն ու բազմազանության նկատմամբ հարգանքը նպաստում են խաղաղությանը, ներդաշնակությանը և սոցիալական համերաշխությանը:

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

Ունենալով ֆրանսախոս շվեյցարացի հիմնադիրներ և մեծամասամբ հայ թիմ՝ միջմշակութային երկխոսությունը միշտ եղել և շարունակում է «ԿԱԶԱ»-ի առօրյայի անբաժանելի մաս կազմել հենց հիմնադրամի ներսում: Իսկ իր շահառուների հետ աշխատանքի տեսանկյունից այն արտահայտվում է հատկապես հետևյալ ձևերով՝

Ֆրանկոֆոնիայի զարգացում

Հաշվի առնելով հայ և ֆրանսիացի ազգերին կապող խորը բարեկամությունը և ՀՀ պաշտոնական ներգրավվածությունը ֆրանսախոս քաղաքական համայնքում (խոսքը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության մասին է, որի լիիրավ անդամ Հայաստանը հանդիսանում է 2012թ. սկսած)՝ ֆրանսախոս շվեյցարացիների կողմից հիմնադրված «ԿԱԶԱ»-ն առաջարկում է՝

- ֆրանսերեն լեզվի և ֆրանկոֆոն մշակույթների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը նպաստող աշխատարաններ հայաստանյան 15 դպրոցներում,
- ֆրանկոֆոն գրականության առաջխաղացում (ընթերցանության ակումբներ, շվեյցարացի ժամանակակից հեղինակների կամ գրաքննադատների մասնակցությամբ կոնֆերանսներ, ինչպիսիք են Մետին Արդիտին, Ռաֆայել Օբերը, Դորիս Ժակուբեքը), ֆրանսալեզու հարուստ գրադարան,
- «Com'tu veux» էլեկտրոնային պարբերականի հրատարակում:



Հայաստանում Շվեյցարիայի դեսպան Լուկաս Գասերը և «ԿԱԶԱ»-ի կողմից հրավիրված գրող Ռաֆայել Օբերը



Ֆրանսիացի կամավոր Սիհամ Աթիայի վարած «Ժեստից դեպի խոսք» խորագրով ֆրանկոֆոն աշխատարանները

Կամավորների ընդունում և ուղարկում

- Եվրոպական կամավորական ծառայության (ԵԿԾ) շրջանակներում «ԿԱԶՄ»-ի կողմից հյուրընկալվող երիտասարդները (ճիշտ այնպես, ինչպես եվրոպական այլ երկրներ ուղարկվող հայ երիտասարդները), ներգրավվում են հիմնադրամի տարբեր ծրագրերում՝ ելնելով իրենց հմտություններից ու հետաքրքրության շրջանակներից: Լինելով տարբեր մշակույթների կրողներ՝ նրանք ոչ միայն բացահայտում են հայկական իրականությունն ու մշակույթը, այլև սեփական մշակույթն են ներկայացնում տեղացիներին: Նման շփումները հարստացման հիանալի աղբյուր են հանդիսանում՝ երիտասարդների միջև համերաշխություն, փոխհասկացողություն և հանդուրժողություն զարգացնելու համար:

Շվեյցարացի այլընտրանքային զինծառայողների ընդունում

- «ԿԱԶՄ»-ն կանոնավոր կերպով հյուրընկալում է այլընտրանքային զինվորական ծառայություն իրականացնող շվեյցարացի երիտասարդների, որոնք, ինչպես ԵԿԾ կամավորները, ներգրավվում են հիմնադրամի գործունեության տարբեր ոլորտներում՝ ի նպաստ Հայաստանի զարգացման:

Վկայություն

Ֆրանսիացի Ժերոմ Բեսեն «ԿԱԶՄ»-ի կողմից մինչ այժմ հյուրընկալված ԵԿԾ ամենաերիտասարդ կամավորն է. *«Ողջ ուսումնառությունս արվեստի քնազավառում է եղել, ուստի կարծում եմ, ամեն դեպքում հուսով եմ, որ ստեղծագործ մոտեցումը, որ փորձել եմ ցուցաբերել մասնավորապես հաղորդակցության, գրաֆիկական աշխատանքների, դպրոցներում անցկացրած տարբեր աշխատարանների մեջ, կարևոր ներդրում է եղել հիմնադրամի կյանքում: Մյուս կողմից՝ Հայաստանում ապրելու փորձառությունը լայնացրել է մտափորձոնս, ավելին՝ ստիպել զարգացնել հարմարվելու և տեղում ինքնակազմակերպվելու հմտություններ, բանի որ շատ հաճախ հայտնվում էի անսպասելի իրավիճակներում, որոնք այդ պահին սթրեսային էին, սակայն հետո գիտակցեցի, որ շատ բան եմ սովորել»:*



Հայաստանում 11 ամիս ապրելով ու «ԿԱԶՄ»-ում գործունեություն ծավալելով՝ իր մեկնումից հետո ևս Ժերոմը շարունակում է մաս կազմել կամավորների մի մեծ բանակի, որոնք զարգացել են «ԿԱԶՄ»-ում, «ԿԱԶՄ»-ի հետ՝ հիմնադրամի գոյության ողջ ընթացքում: Իսկապես, «ԿԱԶՄ»-ն քաջալերում է Հայաստանում որակյալ կամավորության զարգացումը՝ միևնույն ժամանակ հենվելով կամավորների հսկայական ներուժի վրա՝ իր նպատակների իրականացման համար: Ուստի ասել, թե «ԿԱԶՄ»-ի գործունեությունը հնարավոր չէր լինի առանց այդ բոլոր հրաշալի երտասարդների, ամենևին չափազանցված չէ: Եվ ընդհակառակը՝ անհիմն չէ այն հույսը, թե վերջիններիս կյանքը փոխվել է հիմնադրամի հետ անցած ճանապարհի ընթացքում:

«ԿԱԶԱ»-Ի ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ոչ ֆորմալ կրթություն

- յուրաքանչյուր ծրագրի մասնակիցների կարիքների մանրակրկիտ գնահատում և յուրաքանչյուրի ունեցած փորձի դիտարկում, ինչն էլ հանդիսանում է «ԿԱԶԱ»-ի հիմնական հաղթաթուղթը,
- աշխատանք միաժամանակ 3 մակարդակում՝ գիտելիքներ, հմտություններ և անձնային ու սոցիալական որակներ,
- առաջնահերթության տրամադրում ինտերակտիվ մոտեցումներին՝ բոլոր ծրագրերում ու նախաձեռնություններում:

Կրթական գործիքներ

- «Երիտասարդները հանուն հասարակության» ձեռնարկի հրատարակում՝ ուղղված սկսնակ երիտասարդական աշխատողներին և հիմնված «ԿԱԶԱ»-ի՝ ակտիվ բաղադրարկական կրթության ոլորտում կուտակած հնգամյա փորձի վրա: Հայերեն լեզվով այս եզակի հրատարակությունը միևնույն ժամանակ ընդառաջ է գնում հայկական կառավարության կամքին՝ առաջնահերթությունը տալ երիտասարդության զարգացմանը,
- հայերեն լեզվով կրթական խաղերի ստեղծում, որոնք թույլ են տալիս խաղային ոճով շոշափել այնպիսի բարդ թեմաներ, ինչպիսիք են սոցիալական իրավունքները, փախստականների ինտեգրումը, սահմանադրությունը, միջմշակութային երկխոսությունը և այլն:

Առցանց ուսուցում

- սկզբում՝ Moodle հանրորեն հասանելի առցանց ուսումնական հարթակի թարգմանություն հայերեն, որը ներկայումս օգտագործվում է բազմաթիվ կազմակերպությունների կողմից,
- այնուհետև՝ առցանց ուսուցման սեփական հարթակի (<http://elearning.kasa.am>) ստեղծում, որն առաջարկում է առցանց դասընթացներ (գրոսավարների պատրաստում, սոցիալական ձեռներեցություն և այլն), ինչպես նաև ուսումնական մոդուլներ՝ «ԿԱԶԱ»-ի կրթական տարբեր ծրագրերի համալրման և հարստացման նպատակով:

Մենթորություն

Ամենամյա կանոնավոր և հետևողական միջանձնային աշխատանք տարբեր միջավայրերից սերող և անհատական կարիքներ ունեցող հարյուրավոր շահառուների հետ, որի նպատակն է ապահովել վերջիններիս անձնական աճն ու զարգացնել նրանց հմտությունները:

ԿԱՐԵՎՈՐ ԹԿԵՐ

1. 21 հյուրընկալված ԵԿԾ կամավոր և այլընտրանքային զինծառայող՝ սկսած 2010թ.,
2. 52 հայաստանյան համայնք, որոնք ընդգրկվել են «ԿԱԶԱ»-ի նախաձեռնություններում,
3. 1063 էլեկտրոնային ուսուցման հարթակից օգտվող 2012թ. ի վեր, որոնցից 44%-ը՝ մարզերից,
4. 3085 գիրք հիմնադրամի երկու ֆրանսալեզու գրադարաններում,
5. 19 500 երիտասարդ, որոնք մասնակցել են «ԿԱԶԱ»-ի երիտասարդական ծրագրերին և նախաձեռնություններին:



«ԿԱԶԱ»-ի կողմից ստեղծված խաղեր և ձեռնարկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ



Հայաստանում գյուղատնտեսության զարգացումը պարզապես տնտեսության առաջնադասական գրավական լինելուց բացի նաև սոցիալական մարտահրավեր է: Իրականում Հայաստանի բնակչության գրեթե կեսը ներգրավված է տնտեսության առաջնային հատվածի տարբեր ճյուղերում, ուստի գյուղական շրջաններից դիտվող արտագաղթի ներկայիս տեմպերը տվյալ ոլորտի ապագայի վերաբերյալ մտահոգության տեղիք են տալիս:*

«ԿԱԶԱ»-ի մոտեցումը

Հիմնադրամը ներգրավվել է գյուղատնտեսական ծրագրերում, որպեսզի թույլ տա գյուղական բնակչությանը մնալ սեփական հողում: Այս ոլորտում «ԿԱԶԱ»-ի գործունեությունը կենտրոնացած է հիմնականում Գոգարանում՝ Լոռու մարզի լեռնային մի գյուղ, որը գրեթե հիմնովին ավերվել էր 1988թ. երկրաշարժից: Հիմնադրամի առաջին գործն այստեղ եղավ դպրոցի կառուցումը: Դրանից հետո ինչպե՞ս հաշտվել այն փաստի հետ, որ երեխաները ստիպված են արտագաղթել իրենց ծնողների հետ, քանի որ գյուղատնտեսությամբ զբաղվելով ընտանիքը կերակրել հնարավոր չէ: Հենց այդ պատճառով է, որ 2002թ. սկսած «ԿԱԶԱ»-ն տնական և բազմակողմանի գործունեություն նախաձեռնեց՝ այդ գյուղին նոր շունչ հաղորդելու համար՝

- **շինարարություն՝** 2002թ. դպրոցի կառուցում (հիմնադրամի շինարարական առաջին նախագիծը), ջրի և գազի ապահովում,
- **մարդասիրություն՝** մեկնագամյա օգնությունների և կրթաթոշակների տրամադրում,
- **կրթություն՝** լեզուների ուսուցում, մշակույթի տարածում (պարի, նկարչության, երգի խմբակներ), դասընթացներ երիտասարդների համար,
- **զբոսաշրջություն՝** գյուղի ներառում «ԿԱԶԱ»-ի կողմից առաջարկվող զբոսաշրջային երթուղիներում, վեցտեղանոց փոքրիկ հյուրատան կառուցում, հնագիտական պեղումների մեկնարկ,
- **գյուղատնտեսություն՝** կոոպերատիվի ստեղծում (2009թ.), գյուղատնտեսական մեքենաների ձեռքբերում, փարախի և կաթի մթերման կետի նորոգում, բրդի մշակման ծրագիր:

«ԿԱԶԱ»-ի ավելի քան 15 տարիների ներդրումը Գոգարան գյուղում՝ միկրոաշխարհ, որը զարթոնք է ապրում (որտեղից էլ գյուղի կոոպերատիվի անունը՝ «Չարթոնք»), արտացոլվում է նաև գյուղացիների մտածելակերպի աստիճանական փոփոխության մեջ:

Գյուղատնտեսության ոլորտում «ԿԱԶԱ»-ի այլ ծրագրերի շարքում կարելի է նշել՝

- Արջուտ (Լոռի)՝ գյուղատնտեսական մեքենաներ, անասնապահության ծրագիր,
- Արգինա (Արմավիր)՝ արևային չորանոցներ, ջրամբարի, ճանապարհի նորոգում, պահածոների ֆաբրիկա, աջակցություն ծիրանի ցուկատի պատրաստմանը, միկրովարկեր անասնակերի ձեռքբերման համար և այլն:

* <http://report.gov.am/?id=4>

Խոսք համագործակցից

Գոգարանի «Չարթոնք» կոոպերատիվի նախագահ Գագիկ Ավագյան

«Սկզբում աշխատել եմ Գոգարանի դպրոցի շինհրապարակում: Դպրոցի բացումից հետո «ԿԱԶԱ»-ն առաջարկեց ինձ լինել իր ներկայացուցիչը դպրոցում, որտեղ հանձն առա ջեռուցման և տնտեսվարության պատասխանատուի գործառույթը: Դրանով էլ հիմք դրվեց բազում տարիների մեր համագործակցությանը: Երբ Հիմնադրամը որոշեց գյուղում զարգացնել գյուղատնտեսությունը, ինձ վստահվեց ստեղծվելիք կոոպերատիվի նախագահությունը: Այսօր այդ կոոպերատիվը «ԿԱԶԱ»-ի աջակցության և իր անդամների ներգրավվածության շնորհիվ զգալիորեն զարգացել է. այժմ այն ունի 300 ոչխարից բաղկացած հոտ: Ընթացքի մեջ է նաև բրդի մշակման ծրագիրը, որի իրականացման մեջ ներգրավված են բացառապես գյուղի երիտասարդները:



Իհարկե, ամենուր էլ հնարավոր է հանապազօրյա հաց վաստակել, եթե աշխատում ես, սակայն այս համագործակցության մեջ ինձ համար ամենակարևորն այն է, որ կարող եմ մնալ այստեղ՝ հարազատ երկրում, ուր հողը ոտքերիս տակ ամուր եմ զգում»:



«ԿԱԶԱ»-ի կողմից Գոգարան համայնքին նվիրված տրակտորը



Գոգարանի պարի խումբը



Աշակերտները Գոգարանի դպրոցի դիմաց



საქართველო



Չբոսաշրջությունը ՀՀ կառավարության կողմից հայտարարվել է տնտեսության գերակա ճյուղ: Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը 2016թ. ավելացել է 5,7%-ով (1 260 000 այցելու), իսկ օտարերկրացիների այցերից ստացված եկամուտը կազմել է ազգային համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 10%-ը, ինչը 2,5 անգամ ավելի է, քան 2010թ.:*

«ԿԱՉԱ»-ի մոտեցումը

«ԿԱՉԱ»-ի հիմնադիրները նույնպես Հայաստանը բացահայտել են նախ որպես զբոսաշրջիկներ: Չբոսաշրջության ընտրությունը՝ որպես երկրի զարգացման հենասյուն, ակնհայտ է՝ հաշվի առնելով Հայաստանի մարդկային և մշակութային հարուստ ժառանգությունը: Դրան գումարած նաև այն փաստը, որ հայերը սահուն խոսում են մի քանի օտար լեզուներով, ինչն առաջնահերթ պայման է զբոսաշրջության զարգացման համար:

Հիմնադրամի գործունեությունն ի սկզբանե տարբերվել է շատ յուրահատուկ մոտեցմամբ զբոսաշրջային այն բոլոր ոլորտներում, որոնցում այն գործունեություն է ծավալել:

Ճամփորդություններ

«ԿԱՉԱ»-ն նախապատվությունը տալիս է կայուն և բնակեցնող ու մարդակենտրոն զբոսաշրջության զարգացմանը, որը՝

- միահյուսում է երկրի բացահայտումն ու մարդկային շփումները՝ հնարավորություն տալով խորությամբ ճանաչել Հայաստանը,
- թե՛ անհատական, թե՛ խմբակային ճամփորդությունների դեպքում առաջարկում է մանրակրկիտ պատրաստված և խիստ անհատականացված երթուղիներ՝ ակննջալուր ճանապարհորդների կարիքներին և ցանկություններին: Հենց այս մոտեցումն էլ նպաստել է առաջարկի բազմազանությանը՝ դասական երթուղիներ, թեմատիկ շրջագայություններ (երկրաբանություն, բուսաբանություն, թռչնազիտություն, հնագիտություն, եկեղեցական ճարտարապետություն, զինեգործություն, որևէ առանձին շրջանի բացահայտում), շրջագայությունն ու հանգիստը համակցող տարբերակներ (ջերմուկաբուժություն), հեծանվային արշավներ և քայլարշավներ:

Չբոսավարների պատրաստում

Մտահոգված զբոսաշրջության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցմամբ և միաժամանակ երկրում գործազրկության կրճատմամբ՝ «ԿԱՉԱ»-ն առաջարկում է **սկսնակ զբոսավարների** պատրաստման յոթամյա դասընթաց: Վերջինս համատեղում է լսարանային հանդիպումներն ու առցանց դասերը (հիմնադրամի էլեկտրոնային ուսուցման հարթակի միջոցով), տեսական բովանդակությունն ու տեղում կատարվող գործնական առաջադրանքները: Նշենք, որ դասընթացի վերջում, իսկ երբեմն՝ անգամ ընթացքում, զբոսավարի աշխատանք է գտնում մասնակիցների 60%-ը:

Չբոսաշրջության զարգացումը և արդիական հարցերի առաջացումը՝ պայմանավորված աշխարհում տեղի ունեցող փոփոխություններով, «ԿԱՉԱ»-ին դրդեցին կարճաժամկետ դասընթացներ նախաձեռնել **փորձառու զբոսավարների** համար: Այս վերապատրաստումները, որոնք ամեն անգամ մշակվում են հենց մասնակիցների նախապես արտահայտած կարիքների հիման վրա, դարձել են ձմեռային ավանդույթ, որը բարձր է գնահատվում ոլորտի մասնագետների կողմից:

* http://ev.am/sites/default/files/attachments/pdf/TTCR_Press_Release_2017_Final.pdf



«Հայաստանի սուրբ քարեր». «ԿԱԶԱ»-ի աջակցությամբ ֆրանսերեն, անգլերեն և իտալերեն լեզուներով հրատարակված ձեռնարկ



Տիպիկ հայկական շուկա



Գառնու կիրճ

Հրատարակություններ

Որևէ քաղաքի կամ մարզի (քաղաք Գյումրի, Շիրակի մարզ) կամ հատուկ թեմայի (Եկեղեցական ճարտարապետություն) վերաբերյալ զբոսաշրջային հրատարակությունները, որոնք աջակցություն են ստանում և իրագործվում «ԿԱԶԱ»-ի կողմից, նույնպես միտված են նպաստելու երկրում զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև արտասահմանում Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամը հոգ է տանում այդ աշխատությունները մի քանի լեզվով ներկայացնելու մասին: Բացի այդ, «ԿԱԶԱ»-ն այսպիսով միաժամանակ մասնակցում է նաև շվեյցարացի և հայ երիտասարդ հետազոտողների առաջին քայլերին:

Հյուրատներ

«ԿԱԶԱ»-ի վերջին ներդրումը Հայաստանում զբոսաշրջային առաջարկի զարգացման և բազմազանեցման գործում Գյումրիում և Երևանում հիմնադրամի կողմից ստեղծված հյուրատներն են: Տեղակայված քաղաքի կենտրոնում՝ դրանք տեղացի և օտարերկրացի այցելուներին առաջարկում են հարմարավետ և մատչելի հանգիստ:



Վկայություն

«Ամեն ինչ իդեալական էր՝ արտակարգ ընդունելություն, գիշերակաց, փոխադրումներ, սնունդ ու հատկապես՝ բացառիկ զբոսավար՝ Ազնիվ Ասլիկյան: Նա մեզ համար ապահովեց անթերի ուղեկցում, կիսվեց հսկայական պատմական, ինչպես նաև երկրաբանական, բուսաբանական և աշխարհագրական գիտելիքներով՝ ամբողջը համեմված իր երկրի նկատմամբ այնպիսի սիրով, որը մեր մեջ ցանկություն է առաջացնում նորից վերադառնալուն»,- նշում են Դընի Բարբին և Ժանին Դյուբոսոն Բարբին, որոնք «ԿԱՉԱ»-ի միջոցով ճամփորդել են Հայաստանում և Արցախում (Լեռնային Ղարաբաղ):



Զբոսաշրջիկների խումբ Զվարթնոցի տաճարի ավերակների մոտ

Խոսք համագործակցից

Արվեստի պատմության և սոցիոլոգիայի դոկտոր, արվեստաբան, դասախոս, Hyestart ՀԿ-ի և Art Advisory Agency-ի նախագահ, զբոսավարների դասընթացների բանախոս Ալեն Նավարա-Նավասարդյան

«Ես բարձր եմ գնահատում իմ մասնակցության փաստը մի հիմնադրամի գործունեությանը, որը նպատակաուղղված է բաղադրարարական կրթությանը և միաժամանակ առաջարկում է աշխատանքի իրական հնարավորություններ ընձեռող դասընթացներ զբոսաշրջության ոլորտում: Կցանկանայի ընդգծել հիմնադրամի ոգին և նրա թիմի նվիրվածությունը, զբաղեցրած տեղը Հայաստանի ֆրանկոֆոն տիրույթում, ձեռք բերած ճանաչումը Հայաստանում գործող միջազգային և ազգային տարբեր կառույցների շրջանում: Ինչ վերաբերում է մեր համագործակցությանը, իմ պատկերացմամբ, դրա յուրահատկությունը մարդկային շփումների որակի, ինչպես նաև դասընթացի մասնակիցների պատրաստակամության և ցուցաբերած հետաքրքրության մեջ է, ինչը թույլ է տալիս շոշափել դասընթացների հիմնական թեմա հանդիսացող արվեստի պատմությունը և միևնույն ժամանակ անդրադառնալ զբոսաշրջային մոտեցմանը՝ այցելություններ, տեղացիների հետ շփումներ, յուրահատուկ երթուղիների մշակում և այլն՝ դիտարկելով այդ ամենը սոցիալական տեսանկյունից, ինչն էլ զբոսավարին դարձնում է կապող օղակ, կենդանի և զարգացող հայ մշակույթի մեկնաբան և փոխանցող»:



საქართველოს

03

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1997-2017թթ. ընթացքում Հայաստանում «ԿԱԶԱ»-ի կատարած ներդրումները կազմել են 17 միլիոն ՀՖ, որից՝

- **6 միլիոն**՝ մարդասիրական, գյուղատնտեսական և զբոսաշրջային ծրագրերի համար,
- **11 միլիոն**՝ շինարարական նախագծերի համար:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ 20 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝

«ԿԱԶԱ»-Շվեյցարիայի ձեռք բերած դրամական միջոցներ	15 300 000 ՀՖ	90%
«ԿԱԶԱ»-Հայաստանի ձեռք բերած դրամական միջոցներ	1 700 000 ՀՖ	10%


Այսպիսով, Հայաստանում գրանցված հիմնադրամի կողմից հայթայթված ֆինանսավորումը հասնում է միջինը 10%-ի: Նշենք, որ եթե 1997-2011թթ. ընկած ժամանակահատվածում այդ թիվը չէր գերազանցում 3%-ը, ապա 2015-2017թթ. ընթացքում այն հասել է 50%-ի: Արձանագրված կտրուկ աճը պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝

- շահագործման ենթակա ապրանքների և ծառայությունների զարգացում (վճարովի դասընթացներ, ճանապարհորդությունների կազմակերպումից և Երևանի ու Գյումրիի հյուրատներից ստացված հասույթ, տարատեսակ վարձակալություններ),
- ակտիվ ֆոնդային խաղերում տեղում, հատկապես՝ միջազգային կազմակերպությունների շրջանում (ՄԱԿ ՓԳՀ, ՅՈՒՆԻՍԵՖ, «Bread for the World», դեսպանություններ):

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - 1997-2017

52

«ԿԱԶԱ»-ի ներկայիս տարեկան բյուջեն կազմում է 600 000 ՀՖ:




ՆԿԻՐԱՏՈՒՆԵՐԸ 20 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝

Կատույցներ Շվեյցարիայում	82%
Նվիրատվություններ Շվեյցարիայում	8%
Հայաստանում ձեռք բերված ֆոնդեր	5%
Շահույթ հետապնդող գործունեություն Հայաստանում	5%


«ԿԱԶԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ 20 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝



Հիմնարարություն	11 000 000	65%
Սարքավորումների, գույքի, նյութերի ուղարկում	880 000	5%
Մարդասիրություն	1 500 000	9%
Կրթություն	1 700 000	10%
Գյուղատնտեսություն	600 000	3%
Չբուսաշրջություն*	1 020 000	7%
Կառավարում և 2 կենտրոններ	300 000	1%

* Ներառված են միայն աշխատավարձերը և ընդհանուր ծախսերը:



ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ 2015, 2016, 2017ԹԹ. (միջինացված ցուցանիշներ)՝

Գրասենյակ	30 000	4%
Երկու կենտրոններ	45 000	6%
Մարդասիրություն	185 000	24%
Կրթություն	185 000	24%
Գյուղատնտեսություն	30 000	4%
Չբուսաշրջություն*	220 000	28%
Հիմնարարություն	80 000	10%

*2017թ. սկսած **Չբուսաշրջության** մեջ ներառված են ճանապարհորդների բոլոր ծախսերը:

ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Պետական և հարապետական կառույցներ

- Ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակ
ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելություն
Բազել համայնք / Շվեյցարիա
Գեղարքունիքի մարզպետարան / Հայաստան
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակ
Գյումրու երիտասարդական պալատ / Հայաստան
Գյումրու քաղաքապետարան / Հայաստան
Գոգարանի համայնքապետարան / Հայաստան
Գորիսի քաղաքապետարան / Հայաստան
Գրենոբլ քաղաք / Ֆրանսիա
Եվրոպական միություն
Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն / Հայաստան
Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ / Հայաստան
Չարգացման և համագործակցության շվեյցարական գործակալության հայաստանյան գրասենյակ
Չբաղվածության պետական գործակալություն / Հայաստան
Իզերի դեպարտամենտային խորհուրդ / Ֆրանսիա
Լոռու մարզպետարան / Հայաստան
Կրթության ազգային ինստիտուտ / Հայաստան
«Ինտերմունդո» միություն / Շվեյցարիա
Իոնա-Բապերսվիլ համայնք / Շվեյցարիա
Իտալիայի պատվավոր հյուպատոսի գրասենյակ Գյումրիում / Հայաստան
Լոզան համայնք / Շվեյցարիա
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ / Հայաստան
Կորսիե-Բելրիվ համայնք / Շվեյցարիա
Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ
Հայաստանում Էրասմուս+ ծրագրի ազգային գրասենյակ
Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ
Հայաստանում Շվեյցարիայի դեսպանություն
Հայաստանում Ֆրանսիայի դեսպանություն
«Հատուկ կացարան» ՊՈԱԿ / Հայաստան
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով
ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ՀՀ սփյուռքի նախարարություն
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ
 ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակ
 Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ / Հայաստան
 Միգրացիոն պետական ծառայություն / Հայաստան
 Շիրակի մարզային գրադարան / Հայաստան
 Շիրակի մարզպետարան / Հայաստան
 Ռոման քաղաք / Ֆրանսիա
 Ռոն-Ալպ շրջան / Ֆրանսիա
 Սևանի քաղաքապետարան / Հայաստան
 Վարդենիսի քաղաքապետարան / Հայաստան
 Վիեն քաղաք / Ֆրանսիա
 Վրաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանություն
 «Brot für die Welt» գործակալություն / Գերմանիա
 SALTO Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրս կենտրոն / Լեհաստան
 SALTO ԵվրոՄեդ ռեսուրս կենտրոն / Ֆրանսիա

Կրթական կառույցներ

Բյուրիեի վարժարան / Շվեյցարիա
 Գյումրու Շերամի անվան երաժշտական դպրոց / Հայաստան
 Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ / Հայաստան
 Դընի Բերգմանի տարրական դասարաններ / Շվեյցարիա
 Երևանի պետական համալսարան / Հայաստան
 Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց / Հայաստան
 Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան / Հայաստան
 Թալինի ֆրանկոֆոնիայի կենտրոն / Հայաստան
 Կոպեի քոլեջ / Շվեյցարիա
 Հայաստանի Ամերիկյան համալսարան
 Հայաստանում ֆրանսիական համալսարան
 Շիրակի պետական համալսարան / Հայաստան
 Սեն-Մորիսի քոլեջ / Շվեյցարիա
 Սեն-Ֆրանսուա դը Սալի գիշերօթիկ դպրոց / Շվեյցարիա
 «Տիրամայր Հայաստանի» արհեստի դպրոց / Հայաստան
 Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն / Հայաստան

Կրոնական կառույցներ

Ավետարանական ռեֆորմիստական եկեղեցի / Բազել / Շվեյցարիա
 Բյուլի կաթոլիկ ծխական համայնք / Տուր-դը-Տրեմ / Շվեյցարիա
 Նոտր-Դամի կաթոլիկ ծխական համայնք / Լոզան / Շվեյցարիա
 Շիրակի թեմ / Հայաստան
 Պոսկիավոյի կաթոլիկ ծխական համայնքի տիկնանց միություն / Գրիգոն / Շվեյցարիա
 Սեն-Նիկոլայի կաթոլիկ ծխական համայնք / Լոզան / Շվեյցարիա

Սեն-Ռեդանտյորի կաթոլիկ ծխական համայնք / Լոզան / Շվեյցարիա
 Սենտ-Էտիենի կաթոլիկ ծխական համայնք / Լոզան / Շվեյցարիա
 Սենտ-Թերեզայի կաթոլիկ ծխական համայնք / Ժնև / Շվեյցարիա
 «Տիրամայր Հայաստանի» կուսաստան / Հայաստան
 Տուրեյի դոմինիկյան միաբանություն / Ֆրանսիա

Մասնավոր կառույցներ

Ագրոքիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) / Հայաստան
 ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ / Հայաստան
 ԱՄՆ խաղաղության կորպուսը Հայաստանում
 «Ապագա թեքնոլոջիս» ընկերություն / Հայաստան
 «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ / Հայաստան
 «Արաբկիր» հիմնադրամ / Հայաստան
 «ԱրԲԵՍ» առողջության կենտրոն / Հայաստան
 «Արմենիանոս» հիմնադրամ / Լիխտենշտեյն
 «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամ / Հայաստան
 Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան
 Բեռլին Արտ հյուրանոց / Հայաստան
 Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա / Հայաստան
 Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» / Հայաստան
 Գյումրու տեխնոլոգիական կենտրոն / Հայաստան
 Գոգարանի «Չարթոնք» կոոպերատիվ / Հայաստան
 «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամ / Հայաստան
 «Դեպի Հայք» հիմնադրամ / Հայաստան
 Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիայի (YMCA) հայկական ազգային միություն
 «Երկիր և մշակույթ» կազմակերպություն / Ֆրանսիա
 ԷկոԼաբ հիմնադրամ / Հայաստան
 «Ընտանիք» ԲՀԿ / Հայաստան
 «Թոշակառու մանկավարժներ առանց սահմանների» միություն (GREF) / Ֆրանսիա
 «Թոփալյան» հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 «Թրեյներների ազգային թիմ» ՀԿ / Հայաստան
 «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն / Հայաստան
 «ԻՆԹԲԱ» հոգեկան առողջության կենտրոն / Հայաստան
 «Լույս» հիմնադրամ / Հայաստան
 «Կոմիտաս» երգչախումբ (Սիրվարդ Գազանճեան-Փերսըն) / Բլոնե / Շվեյցարիա
 Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ
 Կովկասի ինստիտուտ / Հայաստան
 «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ / Հայաստան
 Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF) / Հայաստան
 Հայկական Բարեգործական Ընդհանուր միություն (ՀԲԸՄ) Հայաստան

Հայկական Բարեգործական Ընդհանուր միություն (ՀԲԸՄ) Շվեյցարիա
 «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ / Հայաստան
 Հայկական Կարմիր խաչի ընկերություն / Հայաստան
 Հայ կամավորների միություն / Հայաստան
 Հաշմանդամների «Փյունիկ» միություն / Հայաստան
 «Հողված 3» ակումբ / Հայաստան
 «Ղուկասյանց եղբայրներ» հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 ՄԱԿ-ի «1% հանուն զարգացման» ֆոնդ / Ժնև / Շվեյցարիա
 «Մեծն Էրիկ» շինարարական կազմակերպություն / Հայաստան
 Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոն /
 Հայաստան
 «Շեն» ԲՀԿ / Հայաստան
 «Շվեյցարական Կարիտաս» ԲԿ / Շվեյցարիա
 Շվեյցարիայի հայոց միություն
 Սանդոզ ընտանիքի հիմնադրամ / Լոզան / Շվեյցարիա
 Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գյումրու
 մասնաճյուղ / Հայաստան
 Սբ. Հովհաննեսի միաբանության շվեյցարական առաջնորդություն / Բազել / Շվեյցարիա
 Սբ. Հովհաննեսի անվան հիմնադրամ / Բազել / Շվեյցարիա
 «Սեմրա» հիմնադրամ / Պորանտրույ / Շվեյցարիա
 «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն
 «Սիրիահայերի միություն» ՀԿ / Հայաստան
 «Սոնա և Արա Արսեր» հիմնադրամ / Շվեյցարիա
 «Վիքիմեդիա Հայաստան» հիմնադրամ / Հայաստան
 «Վորլդ Վիժն» միջազգային ԲԿ հայաստանյան մասնաճյուղ
 Տրուանեի հայկական կենտրոն / Ժնև / Շվեյցարիա
 «Փիլիպոսյան» հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 «Փուլգեիյան-Մեջեյան» հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 Զաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ / Հայաստան
 Զաղաքացիական հասարակության ինստիտուտ / Հայաստան
 «ՖրանկոՄեդիա» ՀԿ / Հայաստան
 Ֆրանսիա-Հայաստան-Արցախի միություն / Ֆրանսիա
 «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» (SPFA) միություն /
 Ֆրանսիա
 «Ֆրանսիայի սկաուտներ» միություն
 Agenda 21 ծրագիր / Էստերոին-Վո / Շվեյցարիա
 AGUR միություն / Բիարից / Ֆրանսիա
 Armenia հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 ASFAR միություն / Լիոն / Ֆրանսիա
 Associazione Aiuto Anziani Armenia / Տիչինո / Շվեյցարիա
 Association des Donateurs anonymes / Ժնև / Շվեյցարիա
 Association en faveur des lèpreux / Վալե դը Ժու / Շվեյցարիա

Association Frères de nos Frères / Ժնև / Շվեյցարիա
 Azad հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 Building an Alternative Future միություն / Շվեյցարիա
 CHArm միություն / Լոզան / Շվեյցարիա
 Coromandel հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 Covalence հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 Crain հիմնադրամ / Բազել / Շվեյցարիա
 Elmas հիմնադրամ / Պորանտրույ / Շվեյցարիա
 IDeA հիմնադրամ / Յայաստան
 Jeanne Lovioz հիմնադրամ / Բազել / Շվեյցարիա
 KulturDialog Armenien հիմնադրամ / Յայաստան
 La Fherté հիմնադրամ / Ֆրանսիա
 Moser հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 Muscari միություն / Լիոն / Ֆրանսիա
 Pro Victimis հիմնադրամ / Ժնև / Շվեյցարիա
 Verein Armenien Direkt / Ցյուրիխ / Շվեյցարիա

Ֆիզիկական անձինք

Բաումգարտներ Թոմաս և Մարիա / Ցուգ / Շվեյցարիա
 Բոնդոլֆիներ Դարիո և Մոնիկ / Լոզան / Շվեյցարիա
 Բրիդելներ Իվ և Ֆրանսուազ / Լոզան / Շվեյցարիա
 Գաբրաշ Վահե / Ժնև / Շվեյցարիա
 Էֆտիներ Ժան-Ժակ և Ժակլին / Վո / Շվեյցարիա
 Ժիրարդեներ Բլեզ և Վերոնիկ / Ժնև / Շվեյցարիա
 Լեոնարդո Գմյուրի ընկերներ / Իոնա-Ռապերսվիլ / Շվեյցարիա
 Լուպիներ Էրիկ և Անիկ և ընկերներ / Տիչինո / Շվեյցարիա
 Կաբի Ավաններ Լեոն և Ալին / Մորժ / Շվեյցարիա
 Կարակաշ Իոն / Վալ-դը-Տրավեր / Շվեյցարիա
 Կլայններ Ալբրեխտ և Մայլի / Պորանտրույ / Շվեյցարիա
 Նավարա-Նավասարդյան Ալեն / Ֆրանսիա
 Շահբազ Արսեն / Մորժ / Շվեյցարիա
 Շալոդեկներ Ռոբերտ և Շարոնա / Մոնակո
 Շտումպ Լյուսիան և ընկերներ / Լյուցեռն / Շվեյցարիա
 Պեկլարներ Ժան և Անն-Լիզ / Բլոնե / Շվեյցարիա
 Ստեփանյաններ Ժակ և Ժոզեֆ և ընկերներ / Պոյակ-Բիարից / Ֆրանսիա
 Ուբեր Բրունո / Սանկտ Գալեն / Շվեյցարիա
 Ուգ Բրունո / Սանկտ Գալեն / Շվեյցարիա
 Ֆրիդլի Մարկ-Անրի / Ժնև / Շվեյցարիա

Եվ հարյուրավոր անդամներ, մասնավորապես՝ Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հայաստանում՝ միանվագ հովանավորությունների ու նվիրատվությունների տեսքով:

ԳԿԵՐՈՒ ՊԵՅԵՐՑ ,ԵՂՆԵՐՆ

04

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅԵՐԻՑ



1997թ. հոկտեմբեր. Սիրվարդ Գազանճեան-Փերսընի ղեկավարած շվեյցարական «Կոմիտաս» երգչախումբը Երևանում, որից սերում է «ԿԱՉԱ»-ն:



2002թ. հոկտեմբեր. Գոգարանի դպրոցի՝ «ԿԱՉԱ»-ի առաջին շիննախագծի բացումը: Արմինե, Գաետանո և Լեոնարդո Գմյուրներ:



2010թ. նոյեմբեր. համակարգչային ազատ ծրագրակազմի առաջամարտիկ Ռիչարդ Սթոլմանը Հայաստանում՝ «ԿԱՉԱ»-ի հրավերով:



2007թ. հոկտեմբերի 12. «Արաբկիր» հիմնադրամի՝ հաշմանդամ երեխաների համար ամառային առողջարանային ճամբարի բացումն Ապարանում: Ձախից աջ՝ «ԿԱՉԱ»-ի հիմնադիր անդամ Դարիո Բոնդուֆի, «Արմենիանոս» հիմնադրամի նախագահ Ժակ Յոշտետեր, «Արաբկիր» հիմնադրամի հիմնադիր Արա Բաբլոյան, «ԿԱՉԱ»-ի նախագահ Մոնիկ Բոնդուֆի, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյան, Կովկասում Շվեյցարիայի դեսպան Լորենցո Ամբերգ, Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյան:



2010թ. հոկտեմբեր. Գյումրիի Շերամի անվան երաժշտական դպրոցի նորոգված թևի բացումը: Ձախից աջ՝ նվիրատու Լյուսիան Շտումպ, ՀՀ-ում Շվեյցարիայի առաջին դեսպան Կոնստանտին Օբոլենսկի, նրա կինը՝ Անետ Օբոլենսկի, որը միաժամանակ «ԿԱԶԱ»-ի խորհրդատուն էր:



2011թ. ապրիլի 1. ընդունելություն «ԿԱԶԱ Գյումրի» կենտրոնում: Աջից ձախ՝ Շվեյցարիայի համադաշնության նախագահ Միշլին Կալմի-Ռեյ, ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյան, Հայաստանում Շվեյցարիայի դեսպան Կոնստանտին Օբոլենսկի:



2014թ. նոյեմբերի 2. առցանց ուսուցման և նոր մեդիաների ոլորտների փորձագետ և փիլիսոփա Սթիվեն Դոունսը «ԿԱԶԱ»-ի նախաձեռնած «Կրթության անսահմանացում» ֆորումին:



2016թ. մայիսի 10. «ԿԱԶԱ»-ի կողմից երիտասարդական աշխատողների համար ստեղծված ձեռնարկի և կրթական խաղերի ներկայացում Գյումրիում



2017թ. սեպտեմբերի 3. «ԿԱԶԱ»-Շվեյցարիայի կոմիտեն ժնևում՝ հիմնադրամի 20-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ:



2017թ. հոկտեմբերի 14. «ԿԱԶԱ»-ի 20-ամյակին նվիրված տոնակատարությունը Երևանում՝ գործընկեր պետական կառույցների, ազգային և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:



2017թ. հոկտեմբերի 20. «ԿԱԶԱ»-ի կողմից կազմակերպված Կրթական գործիքների առաջին ազգային տոնավաճառը Հայաստանում:

Գրաֆիկական ձևավորումը՝ Արմեն Պատվականյան, Լուսինե Բեքարյան
Տեքստերի հեղինակ և խմբագիր՝ Արուս Խաչատրյան
Թարգմանիչ՝ Շողիկ Հակոբյան

«ԿԱՉԱ»-ի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունների համար այցելեք հիմնադրամի կայքէջ՝ www.kasa.am

Դիտեք «ԿԱՉԱ»-ի ներկայիս գործունեությունն ամփոփող ֆիլմը՝ <https://vimeo.com/242541879>

Բացահայտեք «Փոփոխության 20 դեմքեր» լուսանկարչական ցուցահանդեսը՝ https://issuu.com/kasafhs/docs/20_visages_du_changement

Իսկ ավելին իմանալու համար ընթերցեք Մոսիկ Բոնդուֆի-Մասրաֆի հեղինակած «1997-2017. Ինչ, որն իմաստ ունի» հետահայաց գիրքը (առկա է «ԿԱՉԱ»-ի կենտրոններում):



ՎԱՐՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՀ, ք. Երևան 0001,
Թումանյան 24, բն. 5
+ 374 10 58 40 32
kasaam@kasa.am

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ, ք. Երևան 0001,
Նալբանդյան 29
+374 10 54 18 44
espaces@kasa.am

ԳՅՈՒՄՐՈՒ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ, ք. Գյումրի 3101,
Շահումյան 69
+ 374 312 5 65 28
kasa.gumri@kasa.am

ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

ք. Լոզան CH-1012,
Ռոզիերի խճուղի 7
+ 41 21 728 50 78
kasa@kasa.am